

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր կենսունակ՝ իր առաքելության գիտակցումն ունեցող ազգ, ելնելով սեփական աշխարհընկալումից, սահմանում է իր արժեքների համակարգը, նպատակներն ու իղծերը, նախանշում իր հարատեւման ռազմավարությունը, որոնց տեսաբանված ամբողջությունը հանդես է գալիս իբրեւ տվյալ ազգի գաղափարախոսություն: Այն նրա համար դառնում է մի տեսակ Ավետարան, որով նա առաջնորդվում է իր գոյության ընթացքում: Առանց այդ գաղափարախոսության՝ որեւէ ազգ կենսունակ չէ ազգերի գոյության պայքարում: Առանց դրա, նա դառնում է պատեհապաշտ՝ գործելակերպի մեջ անսկզբունք, նպատակի եւ անելիքի մեջ չկողմնորոշվող եւ, հաճախ, իբրեւ դեպքերի խաղալիք, դուրս է մնում պատմության ասպարեզից. վկա՝ ազգերի գոյապայքարը: Այդ է ցույց տալիս նաեւ մեր պատմությունը, որի արյունոտ ու արցունքոտ էջերից շատերը արդյունք են սեփական գաղափարախոսության բացակայության եւ օտար արժեքների, ուսմունքների ազդեցության:

Մեր կարծիքով, Ազգային գաղափարախոսությունը՝ իբրեւ ազգային գաղափարների համակարգ, իբրեւ **Ազգի առաքելության իմաստաբանություն**, գոյություն ունի ի սկզբանե, Ազգի ծնունդի հետ, եւ խնդիրը ո՛չ թե այն ստեղծելը, այլ՝ **ծանաչելը, հայտնագործելն** է:

Այդուհանդերձ, Ազգային գաղափարախոսությունը մեկ ամբողջական փաստաթուղթ չէ եւ ներառում է գաղափարական մի շարք համակարգեր, որոնք թեւ ժամանակների ու շոշափվող հարթությունների առումով տարբեր են, բայց էաբանորեն մույնն են: Հայկական գաղափարախոսության մեջ առկա են եւ Այբուբենը, եւ Էպոսը, եւ հայոց Աստվածաճանաչողությունը, եւ Ցեղակրոնությունը, եւ Տարոնականությունը... Եւ ապագայում ստեղծվելիք արժեքավորը, որոնք ունենալով իրենց ուրույն տեղը գաղափարախոսության մեջ՝ ամբողջացնում են այն:

Մեզանում հաճախ է խոսվում Ազգային գաղափարախոսության՝ կեղծ կամ իրական կատեգորիա լինելու մասին: Ազգային գաղափարախոսությունը կեղծ հռչակողները, թերեւս, ելնում են նրանից, թե

չի՛ կարող լինել մեկ, միասնական գաղափարախոսություն հայության բոլոր անդամների կամ հատվածների (իմա՝ հայ ժողովրդի) համար: Մենք էլ ենք պնդում, որ չկա՝ հանընդհանուր գաղափարախոսություն բոլոր հայ կոչվողների (օրինակ՝ ազգասերի ու ազգադավի, աշխատավորի եւ թալանչիի) համար: Բայց անպայմանորեն կան ընդհանրական գաղափարներ եւ արժեքներ (Հայրենիք, Անկախություն, Լեզու, Մշակույթ եւ այլն) բոլոր այն հայորդիների համար, որոնք շատ թե քիչ պարտավորվածություն են զգում Ազգի եւ Հայրենիքի հանդեպ: Իսկ Ազգային գաղափարախոսությունը, մեկ այլ ձեւակերպմամբ, այդ ընդհանրական՝ Ազգի անդամներին իրար հոգեպես կամ գիտակցորեն կապող, շաղկապող գաղափարների ու արժեքների համակարգն է: Թյուրիմացությունն այն է (եթե, իհարկե, միտումնավոր չէ), որ «Հայ ազգ»-ի մեջ ոմանք ներառում են բոլոր հայանուններին (իրականում նկատի ունենալով **հայ ժողովուրդը**), իսկ մենք՝ հայ մնալ կամեցողներին, հայրեն ապրել ձգտողներին (այսինքն՝ **հայ ազգը**):

* * *

Հասկանալի է, որ գաղափարախոսությունը պիտի բխի սեփական առաքելության գիտակցմամբ սահմանված՝ ազգային գերնպատակից, տեսլականից:

Հայոց գերնպատակ-առաքելությունը մենք հասկանում եւ սահմանում ենք այսպես. **սեփական Ոգու անընդհատ զարգացմամբ եւ Հայաստանում Հայ ցեղի հավիտենության ապահովմամբ՝ Բացարձակին ու Հավերժին, որ է՝ Արարչին մերձենալը:**

Սա մեր նախասահմանված առաքելությունն է, որ տրված է ի սկզբանե:

Կա սակայն մի այլ առաքելություն եւս, որ ստանձնում ես կամովին, երբ տեսնում ես աշխարհի աստվածային-բնական կարգը խախտված:

Նենգ կամքի կրողները միշտ էլ ուզում են աշխարհին տեր լինել, այսինքն աշխարհին տիրել՝ իրենց անբնական կարգը պարտադրել-հաստատելով: Այնինչ հարկ է աշխարհին **տիրություն** անել՝ աստվածային-բնական կարգը պահպանել-հաստատելով. կարգ, որում յուրաքանչյուր ազգ՝ իր բնական հոգեմտավոր կերպին համապատասխան, իր ավանդն է բերում մարդկության ընդհանուր գործին, նպատակներին:

Համաշխարհային այդ առաքելությունն իրագործելի է, երբ կա զինակցությունը բոլոր նրանց, ովքեր հոգեւորն ու մարդկայինը պահելու եւ ազգերի ներդաշնակ բազմազանությունն ապահովելու մտահոգությամբ՝ պատրաստ են մաքառելու հանուն **Ճշմարիտ արժեքա-մակարդի եւ աշխարհակարգի** հաստատման:

Մի դեպքում մենք պատասխանատու ենք միայն մեզ համար, մյուս դեպքում՝ բոլորի:

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ
Դավիթ Հովհաննիսյան**

Ցեղասպանությունը, լինելով հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության կարեւորագույն բաղադրիչներից մեկը եւ գիտակցվելով որպէս «Մեծ աղետ», բաժանեց մեր ժողովրդի պատմությունը եւ ազգային հավաքական հիշողությունը երկու անհավասար մասերի՝ «մինչեւ Ցեղասպանություն» եւ «Ցեղասպանությունից հետո»: Այս բաժանումը թեւ տեղի ունեցավ հիմնականում ենթագիտակցական մակարդակում, այնուամենայնիվ կապված էր հիմնարար գործոնների հետ: Ժողովրդի մի մեծ հատված կորցրել էր իր բնօրրանը, որտեղ ծագել եւ ձեւավորվել էր ազգը՝ իր լեզվով, մշակույթով, սովորություններով: Մյուս կողմից, հոտը զրկվել էր հովիվներից, ընտանիքները՝ ավանդական օջախներից, գերդաստանները՝ նախնիների գերեզմաններից: Այս ամենը չէր կարող չազդել սերունդների հոգեհաղորդակցության եւ սերնդեսերունդ հավաքական հիշողության փոխանցման մեխանիզմի վրա:

Ցեղասպանությունը ձեւավորում է մի նոր պատկերացում ժամանակի ընթացքի մասին, որը սկսում է, ժամանակի գծային ընթացքի տեսակետից, նոր գրոյից¹:

Այդ նոր գրոյից սկսելն ունի իր իրական արտահայտությունը: Բնակության նոր վայրերում հայերը սկսում են նոր տարածքներ «հայացնել»՝ ստեղծելով կամ մոդելավորելով «անիրական հայրենիքներ»: Նրանք կառուցում են դպրոցներ, եկեղեցիներ, թերթեր եւ ամսագրեր հիմնում, ակումբներ եւ գրադարաններ ստեղծում:

Սակայն կա արդեն մի նոր իրողություն, որը պահանջում է հայերից՝ աստիճանաբար ներգրավվել իրենց բնակության երկրների տնտեսական, իսկ հետո՝ հասարակական եւ ավելի ուշ՝ քաղաքական կյանքի մեջ: Դրանք շատերի մոտ, աստիճանաբար, սկսում են ընկալվել իբրեւ «նոր հայրենիք»:

Այսպիսի երկփեղկվածությունը, բնականաբար, իր ազդեցությունն է թողնում այն ամենի գիտակցման վրա, ինչը կապված է մինչեւ «գրոն», այսինքն՝ մինչեւ Ցեղասպանությունն ընկած ժամանակաշրջանի հետ: Պատկերացումները եւ հիշողությունները դիցաբանացվում են, իրողու-

թյունները սկսում են ընկալվել որպես Սփյուռքում եւ Հայրենիքում ազգային ինքնության ամբողջականությունն ապահովող միջեր:

Մեզ համար եւ հատկապես մեր Սփյուռքի համար ինքնության ճշտման կարեւորագույն խնդիրը կապված է «կորուսյալ դրախտի» եւ «ավետյաց երկրի» միջերի, աստվածային արդարության վերականգնման, հատուցման եւ «էրգիրը» վերագտնելու հետ:

Դիցաքաղաքական հարթությունում այս դիցաբանական համակարգի արտահայտությունը եղավ Հայ դատի հայեցակարգը, որը հատկապես 1960-ականներից իր կոնկրետ քաղաքական դրսեւորումները ստացավ Սփյուռքում եւ Խորհրդային Հայաստանում:

* * *

1991թ. հայ ազգի եւ մասնավորապես՝ հայ Սփյուռքի կյանքում տեղի ունեցավ կարեւոր փոփոխություն. ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը: Այս փոփոխությունը չէր կարող հսկայական ազդեցություն չունենալ հայերի էթնիկական ինքնագիտակցության, ազգային հարթության մեջ նրանց տեղի ճշտման եւ այդ տեղը որոշող գործոնների վերաիմաստավորման վրա:

Մինչեւ Հայաստանի Հանրապետության՝ որպես անկախ եւ ինքնիշխան պետության, ձեւավորումը «հայրենիք» հասկացությունը Սփյուռքի տարբեր հատվածների մոտ տարբեր ընկալում ուներ: Ցեղասպանության հետեւանքով բռնի կերպով տեղահանված արեւմտահայերի համար «հայրենիք» էր Արեւմտյան Հայաստանի այն կոնկրետ բնակավայրը, որի հետ կապված էին ընտանեկան՝ ծնողներից զավակներին հաղորդվող հիշողությունները եւ պատմությունները²:

Անկախ հայկական պետության ի հայտ գալը, մի կողմից, ընկալվեց որպես դարավոր երազանքների իրականացում, սակայն մյուս կողմից՝ այն չգիտակցվեց իր ամբողջ խորությամբ. զանգվածային սփյուռքյան գիտակցության մեջ այն ընկալվեց որպես մի նոր «Հայկական տուն»³, բայց ոչ իբրեւ հայության կենտրոն եւ իր հետ չբերեց «հայաստանակենտրոնության» հայեցակարգ:

Քաղաքական գիտակցության հարթության մեջ «Հայրենիքը՝ հայության կենտրոն» կոնցեպտը եւ Հայ դատը, որը սփյուռքյան պայմաններում ազգային ինքնության պահպանման տեսակետից չափազանց կարեւոր գործոն էր, «հայաստանակենտրոնության» հայեցակարգի ձեւավորված չլինելու պատճառով՝ մտան մրցակցության մեջ՝ յուրաքանչյուրը ձգտելով հաստատել իր առաջնային նշանակությունը, ինչը թե՛ սխալ է եւ թե՛ վտանգավոր:

Ցեղասպանության, այսինքն՝ «մեղանշման» եւ «հատուցման» չափազանց կարեւոր խնդիրը, լինելով դիցաքաղաքականության մաս, սկսեց քննարկվել նույն մակարդակում եւ նույն եզրաբանությամբ, ինչ Հայաստանի արտաքին քաղաքականության, այսինքն՝ «ռեալ պոլիտիկի» ոլորտին պատկանող հարցերը: Սա իր հերթին հանգեցրեց նաեւ հայ-թուրքական երկկողմանի հարաբերությունների վերաբերյալ հայկական տեսակետների հակասականության⁴, ինչն էլ պատճառ դարձավ այս հարցում պետության դիրքորոշման անորոշակիության:

Վերը շարադրվածից կարելի է բխեցնել հետեւյալը՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը հայ-թուրքական հարաբերությունների ոլորտում պետք է ձեւավորվի՝ հիմնվելով «ռեալ պոլիտիկի» պահանջների վրա, ինչը ենթադրում է նաեւ «հայաստանակենտրոնության» հայեցակարգից բխող իրական հոգածություն Սփյուռքի հայապահպանական խնդիրների լուծման հարցում,

2. Սփյուռքի կազմակերպված գործունեությունը պետք է հիմնվի դիցաքաղաքականության էությունը կազմող միֆերի վրա՝ լուծելով դրանցից բխող համայնքային եւ միջհամայնքային խնդիրները եւ միաժամանակ ամրապնդելով ազգային ինքնության պաշտպանության համակարգը:

Միայն այսպիսի գործելակերպի շնորհիվ հնարավոր կլինի ստեղծել ժամանակակից աշխարհում գլոբալ համակարգերի օրեցօր աճող կարեւորությանը եւ ազդեցությանը համապատասխանող՝ մրցունակ Հայկական համակարգ:

¹ Առաջին գրոն՝ աշխարհի եւ մարդու արարումն է, երկրորդը՝ ազգի նախահոր սխրանքը (Հայկ եւ Բել), երրորդը՝ Քրիստոսի ծնունդը եւ այլն:

² Հարկ է հաշվի առնել, որ արեւմտյան երկրներում բնակվող հայության միայն չնչին մասն էր կապված Խորհրդային Հայաստանի հետ: Այդ թիվն ավելի մեծ էր արեւելյան հայ համայնքներում, սակայն նույնպես պետք է նշել, որ գաղափարական կամ այլ պատճառներով այս երկրներում բնակվող հայերից շատերը նույնպես չէին ընկալում Խորհրդային Հայաստանը՝ որպես հայրենիք:

³ Այս առումով հետաքրքիր է սկզբնական շրջանում Սփյուռքի դրսևորած վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության դեսպանատների եւ հյուպատոսությունների նկատմամբ: Դրանք ընկալվում էին որպես մի նոր ակունք կամ կուսակցական գրասենյակ:

⁴ Սույն հոդվածի խնդրից դուրս է անդրադառնալ երկկողմանի հարաբերությունների վերաբերյալ թուրքական տեսակետներին: Նշենք միայն, որ թուրքական տեսակետների հակասականությունը նույնպես կապված է դիցաքաղաքականության դիցաբանական եւ քաղաքական համակարգերը չտարբերակելու հետ:

ԱՂԻՔԵԶԱՆ. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆՆԹԱՑՆԵՐ

Գագիկ Տեր-Չարությունյան

Անգամ կայուն եւ երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր ունեցող երկրներում նոր վարչակազմի ի հայտ գալը ենթադրում է որոշակի փոփոխություններ պետության ներքին եւ արտաքին քաղաքականությունում: Նման փոփոխություններն առավել զգալի են պետականորեն չկայացած երկրներում, ինչպիսին Ադրբեջանն է: Իլիամ Ալիեւի նախագահ ընտրվելուց հետո այդ երկրի ներքին եւ արտաքին ոլորտներում ընթացող զարգացումներում նկատվում են միտումներ, որոնք բացակայում էին Չեյդար Ալիեւի պաշտոնավարության տարիներին:

Պայքար խմբավորումների միջեւ

Տեղեկությունների համաձայն, Իլիամ Ալիեւը պետական գործերում իրեն դրսևորում է որպես ոչ գործունյա անձնավորություն: Նա սիրում է կոմայուտերային խաղեր եւ աշխատանքային օրվա 3-4 ժամը զբաղվում է դրանցով: Հայտնի է նաեւ, որ Իլիամը երեկոները զնում է ազգականների մոտ եւ թուրք խաղում (նրա այդ մոլուցքի մասին հիշատակումները շատ էին եւ նախկինում): Նման իրավիճակը հանգեցրել է նրան, որ նախագահը չունի լիարժեք վերահսկողություն պետական կադրերի վրա եւ լիովին չի տիրապետում երկրում ընթացող գործընթացներին:

Որպես հետեւանք՝ Իլիամին շրջապատող, այսպես կոչված, «հայկական» եւ «նախչեւանյան» կլանների միջեւ հարաբերությունները սրվել են: Այդ հարաբերությունները նախկինում էլ բարվոք չէին, սակայն Չեյդար Ալիեւը կարողանում էր պահպանել հավասարակշռությունը եւ ծագած հակասությունների ժամանակ հանդես գալ դատավորի դերում: Այժմ այդ խմբավորումների անդամները միմյանց վերաբերյալ վարկաբեկիչ նյութեր են հրապարակում մամուլում, եւ նրանց գործողությունները դուրս են եկել Իլիամի վերահսկողությունից:

Մասնավորապես սուր քննադատության են ենթարկվում «հայկական» կլանի ներկայացուցիչները՝ առողջապահության նախարար Ալի Անսանովը եւ լուսավորության նախարար Միսիր Մարդանովը, որոնց մեղադրում են դրամաշնորհների յուրացման մեջ: Վերջիններս էլ պատասխան

մեղադրանքներ են ներկայացնում «նախչեւանյան» կլանի ներկայացուցիչներին՝ վարչապետին եւ նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհտիեւին, ասելով, թե դրամաշնորհները յուրացվում են այդ կառույցներում: Նշենք, որ խիստ ազդեցիկ, բայց իրեն ստվերում պահող Մեհտիեւը հանդիսանում է Իլիամ Ալիեւի հիմնական հենարանը:

Վարկաբեկիչ նյութեր են հրապարակվում նաեւ Ազգային անվտանգության նախարար Նամիկ Նասիբովի եւ Նախիջեւանի Գերագույն խորհրդի նախագահ Վասիֆ Թալիբովի (Ալիեւների ազգականն է) մասին: Հատկանշական է, որ այդ ինքնավարության իշխանությունները Նախիջեւան ժամանած Բաքվի լրագրողներին օդանավակայանի տարածքից դուրս չեն թողնում եւ նույն ինքնաթիռով ուղարկում են հետ:

Ուժ են հավաքում նաեւ նոր ձեւավորվող եւ զուտ Իլիամին պարտական, այսպես կոչված, «երիտասարդ ռեֆորմատորները»: Նրանք այժմ փորձում են տիրանալ Բաքվի քաղաքապետ Հաջիբալու Աբուբալիբովի աթոռին: Սակայն «ռեֆորմատորները» իրենց ունեցած ազդեցությամբ դեռ զգալիորեն զիջում են ավանդական խմբավորումներին:

Ձարգացումներ Ղարաբաղյան հիմնախնդրի համատեքստում

Իլիամ Ալիեւի վարած քաղաքականությունը ստեղծված ներքաղաքական պայմաններում չէր կարող հետեւողական լինել: Մամուլի հրապարակումներից ձեւավորվում է տպավորություն, որ նախագահի ռադիկալ հայտարարությունները Ղարաբաղի վերաբերյալ ավելի շուտ պայմանավորված էին խառնաշփոթ ներքաղաքական իրավիճակով, երբ տարբեր խմբավորումներ Ղարաբաղյան հարցը դարձրել էին շահարկման առարկա: Նկատենք, որ մինչեւ վերջերս Իլիամ Ալիեւը կատարել էր ընդամենը մեկ կադրային փոփոխություն՝ պաշտոնազրկելով կապի նախարարին, որն, ի դեպ, չէր պատկանում որեւէ խմբավորման: Սակայն նախագահը կատարեց խիստ վճռական քայլ՝ պաշտոնաթող անելով ԱԳ նախարար Վիլայաթ Գուլիեւին եւ նրա տեղը նշանակելով Իտալիայում դեսպան Էլմար Մամեդյարովին: Առաջինը հայտնի էր Ղարաբաղյան հարցում ծայրահեղական հայտարարություններով: Նոր նախարարը կադրային դիվանագետ է, ավարտել է Կիեւի Միջազգային հարաբերությունների պետական համալսարանը (այդ նույն հաստատությունն է ավարտել նաեւ Վրաստանի ներկա նախագահ Մ. Սահակաշվիլին), համեմատաբար երիտասարդ է (43 տարեկան): Նկատենք, որ Մամեդյարովը «նախչեւանյան» խմբավորումից է եւ որոշ հրապարակումների համաձայն, Իլիամ Ալիեւի կնոջ ազգականն է: Դատելով զբաղեցրած պաշտոնից՝ նա պետք է որ

գտնվի արեւմտյան ազդեցության տակ եւ դժվար թե ծայրահեղական լինի: Նրա նշանակումը կարելի է կապել Պետդեպարտամենտի քարտուղարի տեղակալ Ռիչարդ Արմիթեջի Երեւան–Բաքու կատարած այցի հետ եւ գուցե անգամ համաձայնեցված է նրա հետ: Արմիթեջի այցի նպատակներից էր Երեւան–Բաքու նոր բանակցային գործընթացի խթանումը: Հատկանշական է, որ Արմիթեջի այցին եւ Մամեդյարովի նշանակումին հետեւեց Մինսկի խմբի հայտարարությունը Պրահայում Օսկանյանի եւ Մամեդյարովի կայանալիք հանդիպման մասին:

Այս առիթով նկատենք, որ Մինսկի խմբի համանախագահ Ռիչարդ Փերինային փոխարինող Սթիվեն Մանը (մինչ այդ եղել է ԱՄՆ նախագահի հատուկ ներկայացուցիչը Կասպիցի տարածաշրջանում եւ հայտնի է իր ադրբեջանամետությամբ) առաջին հերթին պետք է պաշտպանի նավթային ընկերությունների շահերը եւ Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի անվտանգությունը: Դա իր հերթին ենթադրում է պատերազմական գործողությունների անցանկալիությունը տարածաշրջանում եւ առաջին հերթին՝ դարաբաղյան հակամարտության գոտում:

Բնորոշ է նաեւ այն հանգամանքը, որ ադրբեջանցի լրագրողների կողմից Իգդիրում հայ-թուրքական սահմանի բացման դեմ կազմակերպված ակցիան, համաձայն թուրքական մամուլի մոնիթորինգի, որեւէ էական արձագանք չի գտել Թուրքիայի իշխանությունների կողմից վերահսկվող ՋԼՄ-ում եւ թուրք հասարակայնության շրջանակներում: Սա անուղղակիորեն խոսում է այն մասին, որ Կիպրոսի հարցում անհաջողության մատնված թուրքական իշխանությունները փորձում են ավելի ճկուն քաղաքականություն վարել հայ-թուրքական սահմանի բացման հարցում, ինչն այսօր փաստորեն վերածվել է Թուրքիայի եվրամիություն ընդունվելու նախապայմաններից մեկի:

Պենտագոնի մոտեցումները Ղարաբաղյան հիմնախնդրին

Անհրաժեշտ է ընդգծել, որ վերը ներկայացված դիտարկումները համահունչ են ամերիկյան տեղեկատվական աղբյուրներում նախկինում հայտնված հաղորդումներին: Համաձայն այդ հաղորդումների, «21-րդ դարում ազգային անվտանգության հանձնաժողովի» փորձագետները ***(1998թ. Պենտագոնի կողմից ստեղծված այս կազմակերպության կազմում են օրենսդրական, զինվորական եւ բիզնեսի շրջանակների 12 հեղինակավոր ներկայացուցիչներ Հանրապետական եւ Դեմոկրատական կուսակցություններից)*** Պենտագոնի պատվերով կատարել են Կենտրոնական Ասիայի եւ Հարավային Կովկասի

իրավիճակի վերլուծություն: Համաձայն այդ փաստաթղթի, Վաշինգտոնը պետք է վերանայի Իրանի մեկուսացմանն ուղղված իր քաղաքականությունը, վերացնի տնտեսական պատժամիջոցները եւ երաշխավորի Իրանին, որ ՆԱՏՕ-ն հարավկովկասյան տարածաշրջանում չի ընդարձակվելու: Նման մոտեցումը պայմանավորվում է նրանով, որ ՆԱՏՕ-ի ընդարձակումը ուժեղացնում է Թուրքիայի դերը տարածաշրջանում, ինչն այսօր չի համընկնում ԱՄՆ շահերին:

Նշենք, որ դեռ 2001թ. ԱՄՆ-ի կողմից իր շահերի նման վերազնահատումը օբյեկտիվ հիմքեր ուներ: Ըստ մեզ՝ այդ գնահատականներն առավել հրատապ են հնչում այսօր, ինչը պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով.

1. Իրաքում ընթացող շիաների ապստամբությունը ամենայն հավանականությամբ թելադրվում է Իրանից: Դա ապացույց է, որ Իրանն է այսօր տիրում նախաձեռնությանը մերձավորարեւելյան տարածաշրջանում, եւ ԱՄՆ հետագա գործառույթներն այդ տարածաշրջանում (առավել եւս առաջխաղացումը) անհնարին են առանց Իրանի հետ ընդհանուր եզրեր գտնելու,

2. ԱՄՆ-Եվրոպա հակասությունների համատեքստում ԱՄՆ-ը էապես փոխել է իր ռազմավարական մոտեցումները ՆԱՏՕ-ի նկատմամբ եւ դադարել է իրեն նույնացնել այդ կազմակերպության հետ: Այս առումով ԱՄՆ-ին գուցե այնքան էլ ձեռնտու չէ տեսնել Ադրբեջանը (նաեւ Վրաստանը) ՆԱՏՕ-ի կազմում, եւ նա գերադասում է այդ երկրներում ունենալ միայն իր սեփական զինված ուժերը, ինչին եւ այսօր մենք ականատես ենք,

3. Իրաքի եւ հատկապես Իրաքյան Քուրդիստանի հարցում երեւան են եկել շահերի բավական սուր հակասություններ Թուրքիայի եւ ԱՄՆ-Իսրայել տանդեմի միջեւ,

4. Ինչպես ցույց տվեցին Թբիլիսի – Բաթում հակամարտության վերջին զարգացումները, Թուրքիան (ինչ-որ տեղ նաեւ Ադրբեջանը), հենվելով 1921թ. Կարսի պայմանագրի վրա, Աջարիայի հանդեպ ցուցաբերեց հավակնություններ, որոնք հակասում էին ԱՄՆ շահերին տարածաշրջանում:

Այս վերջին երկու կետերը վկայում են, որ ճգնաժամային պահերին Թուրքիան, ինչպես եւ նրան շատ հարցերում հարող Ադրբեջանը, կարող են գրավել ԱՄՆ շահերին հակասող դիրքորոշումներ:

Վերադառնալով Պենտագոնի փաստաթղթի քննարկմանը՝ նկատենք, որ այնտեղ բարձր գնահատական է տրվում ԼՂՀ 25 հազարանոց բանակին, որը ռազմական գործողությունները վերսկսելու պարագայում կարող է առաջանալ Եվլախ–Մինգեչաուր գծով եւ սպառնալ Բաթու–Թբիլիսի–

Սուփսա նավթամուղին: Միեւնույն ժամանակ նշվում է, որ եթե անգամ ԼՂՀ բանակը պարտվի դարաբաղյան ճակատում, ապա որպես պատասխան կարող է հետեւել Նախիջեւանի գրավումը հայերի կողմից, ինչը կհանգեցնի լայնածավալ ռազմական ընդհարման Թուրքիայի եւ Ռուսաստանի մասնակցությամբ: Պենտագոնի փորձագետները գտնում են, որ պետք է ամեն ինչ անել, որպեսզի ՀՀ-ն եւ Ադրբեջանը համաձայնության գան եւ նպաստեն ԼՂՀ-ին փաստացի անկախություն տալուն, սակայն ձեւակերպելով դա որպես լայն ինքնավարություն Ադրբեջանի կազմում: Միեւնույն ժամանակ փորձագետները գտնում են, որ եթե ՀՀ-ն եւ Ադրբեջանը շուտափույթ համաձայնության չգան, ապա հնարվոր է ռազմական գործողությունների վերսկսում:

Այսպիսով՝ կարելի է հանգել հետեւյալ եզրակացությունների. ԱՄՆ-ը մոտ ժամանակներս աշխուժացնելու է ՀՀ–Ադրբեջան բանակցությունները եւ ճնշումներ գործադրելով փորձելու է ստիպել հայկական եւ ադրբեջանական կողմերին գնալ կոմպրոմիսների: Այդ բանակցային ժամանակահատվածում ռազմական գործողությունների վերսկսումը գրեթե բացառվում է: Բանակցային գործընթացի անհաջողության դեպքում պատերազմի հավանականությունն աճում է, թեւ ներկա իրադրությունում այն հակասում է ՍՄՆ շահերին մեր տարածաշրջանում:

Թեհրան — Մոսկվա երկաթգծը կարող է անցնել Ադրբեջանով

Ինչպես նշել ենք վերը, ճգնաժամային պահերին Թուրքիան, ինչպես եւ նրան շատ հարցերում հարող Ադրբեջանը կարող են գրավել ԱՄՆ շահերին հակասող դիրքորոշումներ: Մասնավորապես, Ադրբեջանի կողմից նման մոտեցումներ հնարավոր են ռազմավարական նշանակության հաղորդակցման ուղիների որոշ ծրագրերի նկատմամբ: Խոսքը հատկապես Ռուսաստան–Իրան երկաթգծի մասին է:

Իրանը եւ Ռուսաստանը մեկ անգամ չէ, որ հայտարարել են Իրանի եւ Ռուսաստանի միջեւ ուղիղ երկաթուղային հաղորդակցության անհրաժեշտության մասին: Անցած տարվա վերջին եւ 2004թ. սկզբին ամեն ինչ ասում էր այն մասին (մասնավորապես Ռուսաստանում Իրանի դեսպանի հայտարարությունը, որ Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի կարգավորումը կօգնի վերականգնել երկաթուղային հաղորդակցությունը Իրանի եւ Ռուսաստանի միջեւ), որ եւ Ռուսաստանը, եւ Իրանը կփորձեն վերականգնել երկաթուղային հաղորդակցությունը Թավրիզ–Ջուլֆա երկաթուղով:

Միեւնույն ժամանակ Ռուսաստանը եւ Իրանը միմյանց հետ կարող են կապվել նաեւ այլ ճանապարհով: Ապրիլի 7-ին «Ռուսաստանի երկաթուղիներ» ընկերության ղեկավար Գ. Ֆադեեւը թեհրանում հայտարարեց, որ իր ընկերությունը բանակցություններ է վարում «Իրանի երկաթուղիներ» ընկերության հետ՝ ադրբեջանական Աստարա եւ իրանական Կազվին քաղաքների միջեւ երկաթգիծ կառուցելու վերաբերյալ, Մոսկվա-Բաքու-Աստարա (ադրբեջանական)-Աստարա (իրանական)- Կազվին-Թեհրան երկաթուղային կապ ստեղծելու համար: Այդ նախագիծը գնահատվում է \$177մլն: Հարկ է նաեւ նշել, որ դեռ մի քանի տարի առաջ այս նախագիծը նույնպես քննարկվում էր կողմերի միջեւ եւ այն ժամանակ խոսվում էր մոտ \$400մլն-ի մասին: Նկատենք, որ այս ճանապարհով Իրանը (որը վերջին տարիներին հատուկ ուշադրություն է դարձնում հաղորդակցման ուղիներին) այլընտրանքային երկաթգծային կապ է հաստատում Եվրոպայի հետ:

Ակնհայտ է, որ նման երկաթգծային ծրագրի իրագործման պարագայում կբարձրանա Ադրբեջանի դերակատարումը միջազգային հաղորդակցությունների համակարգում, եւ այդ երկրին կընձեռվեն նոր տնտեսական հնարավորություններ: Կասկած չի հարուցում նաեւ այն հանգամանքը, որ այդ ծրագիրը ինչ-որ տեղ հարվածում է Հայաստանի ազգային շահերին: Միեւնույն ժամանակ պետք է նշել, որ Մոսկվա-Թեհրան երկաթգծի ծրագիրն ունի աշխարհաքաղաքական նշանակություն: Բնորոշ է, որ որոշ վերլուծաբաններ այդ ծրագրին տալիս են թեհրան-Մոսկվա-Բեռլին անվանում՝ ակնարկելով առայժմ փոքր-ինչ տեսական բնույթի աշխարհաքաղաքական հնարավոր առանցքի վերաբերյալ: Եվ եթե Մոսկվա-Թեհրան երկաթգծի ծրագիրը դիտարկենք այս տեսանկյունից, կարող ենք ենթադրել, որ այն ինչ-որ չափով պետք է հակասի ԱՄՆ տարածաշրջանային շահերին: Իր հերթին այդ երկաթուղին ընդգծում է Ռուսաստանի եւ Իրանի շահերը Ադրբեջանում եւ առիթ տալիս նրանց ավելի ակտիվ քաղաքականություն վարել Ադրբեջանի նկատմամբ:

ԻՐԱՆ-ԱՂՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ Սեւակ Սարուխանյան

Ժամանակակից Աղրբեջանի Հանրապետության տարածքը դարեր շարունակ եղել է Պարսկաստանի մաս, իսկ այստեղ ապրող թուրքալեզու բնակչությունը սեփական ինքնությունն ավելի շատ կապել է կրոնական, այսինքն՝ մահմեդական-շիական պատկանելության հետ: Այս տեսակետից ժամանակակից պարսիկ շիա-մահմեդականները ոչ պակաս մոտ պետք է համարվեին Աղրբեջանի բնակիչներին, քան, ասենք, սունիզմ դավանող թուրքերը: Սակայն Աղրբեջանի պետության ստեղծումը 1918 թվականին եւ նրա խորհրդայնացումը 1920 թվականին համապատասխան ազդեցություն թողեցին աղրբեջանցիների ինքնագիտակցության վրա՝ այն ավելի շատ ուղղելով դեպի ազգային պատկանելության եւ ծագումնաբանության հիմնախնդիրների պարզմանը:

1918-ին Անդրկովկասի հարավում ստեղծված պետությունն իր Աղրբեջան անվանումը վերցրել էր պարսկական հյուսիսային երկրամասից, որտեղ ապրում էին նրանց ցեղակիցները: Այս իրողությունը երբեք չէին մոռացել ոչ խորհրդային ղեկավարները (որոնցից տակավին Ստալինը մտադրություն ուներ միավորել «պատմական» Աղրբեջանի երկու մասերը), ոչ իրանական ղեկավարները, որոնք ԽՍՀՄ փլուզումից հետո հույս ունեին վերականգնել իրենց ազդեցությունը Աղրբեջանում, ոչ էլ ժամանակակից Աղրբեջանի ազգային գործիչները, մասնավորապես առաջին նախագահ Էլչիրեյը. վերջինիս օրոք Աղրբեջանը պաշտոնական պետական քաղաքականության կուրս էր համարում իրանական Աղրբեջանի միացումը Աղրբեջանի Հանրապետությանը:

Ժամանակակից Աղրբեջանի ներքին եւ արտաքին քաղաքականության մի շարք ուղղություններ հարուցել եւ հարուցում են Իրանի ղեկավարության անհանգստությունը: Դրա հիմնական պատճառներից են՝ Կասպից ծովի կարգավիճակի մասին երկու պետությունների ունեցած տարբեր մոտեցումները, Աղրբեջանի Հանրապետության հավակնությունները իրանական Աղրբեջանի նկատմամբ, Աղրբեջանի կողմից Բաքու-Ջեյհան արեւմտյան նախագծի իրականացումը, ԱՄՆ զորքերի հնարավոր տեղակայումը Աղրբեջանում, ՆԱՏՕ-ին Աղրբեջանի անդամակցելու հեռանկարները, թուրք-աղրբեջանական լայնածավալ դաշինքը, աղրբեջանա-իսրայելական համագործակցությունը:

Ադրբեջանն ու Իրանը ունեն միմյանց տարածքում սեփական ազդեցության տարածման երկու լուրջ կռվաններ. իրանցիները՝ ի դեմս Ադրբեջանի շիա-մահմեդականների, Ադրբեջանը՝ հանձին Իրանում բնակվող ազգակիցների: Բայց դրանք միանշանակ գործոններ չեն.

1. Իրանի Իսլամական Հանրապետությունը թեև հանդիսանում է շիա-մահմեդական աշխարհի հոգեւոր առաջնորդը, սակայն ոչ բոլոր շիական համայնքների դեպքում է, որ ունենում է իր ցանկալի ազդեցությունը: Ադրբեջանի պարագայում այս իրողությունը պայմանավորված է հիմնականում ադրբեջանցիների ոչ բավականաչափ կրոնական լինելով: Խորհրդային աթեիստական վարչակարգը համապատասխան ազդեցություն է թողել ադրբեջանցիների ինքնագիտակցության վրա: Այն, որ կրոնականը Ադրբեջանում ստորադասվում է քաղաքականին կամ ազգային պատկանելությանը, պարզ է դառնում գոնե այն փաստից, որ վերջին տասնամյակի ընթացքում Ադրբեջանի քաղաքական էլիտայի մի մասը սկսեց շիականի փոխարեն այցելել սունիական մզկիթներ՝ փաստորեն անցում կատարելով դեպի սունիզմ:

2. Դարձյալ պատմական զարգացման ընթացքով պայմանավորված՝ իրանական ադրբեջանցիների մեծ մասը զուրկ է ազգային (ադրբեջանական) ինքնագիտակցությունից, իսկ եթե այն (ազգային ինքնագիտակցությունը) ինչ-որ չափով տեսանելի է, ապա մեծ մասամբ կապված է իրանական պետության հետ: Լինելով ինտեգրված իսլամական հանրապետության քաղաքական, հոգեւոր եւ մշակութային կյանքին՝ իրանական ադրբեջանցիները երբեք զրկված չեն եղել իշխանական եւ կրոնական կյանքին մասնակից լինելու հնարավորությունից: Բերենք ընդամենը մեկ օրինակ. Իրանի հոգեւոր առաջնորդ Խամենեին ունի ադրբեջանական ծագում, սակայն նրան դժվար թե հնարավոր լինի մեղադրել ադրբեջանական ազգայնականության մեջ:

Ադրբեջանի անկախացումից հետո Իրանը փորձեց ազդեցություն նվաճել նրա հասարակական-քաղաքական կյանքում, սակայն նախկին կոմունիստական նոմենկլատուրայի ներկայացուցիչ Մութալիբովի եւ թուրքամետ Էլչիբեյի ղեկավարության ժամանակ նման ազդեցություն ձեռք բերելը գրեթե անհնար էր: Ուշագրավ է, որ Նախիջեւանի առաջնորդ եղած ժամանակ Հ.Ալիեւը 1990-ականների սկզբին Բաքուն շրջանցելով անկաշկանդ զարգացնում էր համագործակցությունը ոչ միայն Թուրքիայի, այլեւ Իրանի հետ:

Իրանի հանդեպ նման քաղաքականությունից Ալիեւը շրջադարձ կատարեց Ադրբեջանի նախագահ դառնալուց հետո: Մասնավորապես, նա ԵԱՀԿ Ստամբուլյան գազաթափողովի ժամանակ Անդրկովկասի

անվտանգության համակարգի ստեղծման իր առաջարկում վերը նշված համակարգի մեջ ընդգրկել էր տարածաշրջանային պետություններ Թուրքիային եւ Ռուսաստանին, բայց ոչ՝ Իրանին:

Այսօր միմյանց ներքին կյանքին խառնվելու մեղադրանքներ իրար ներկայացնում են թե՛ Իրանը, թե՛ Ադրբեջանը: Բաքուն Իրանին մեղադրում է Ադրբեջանի իսլամական կուսակցությանը պաշտպանելու, ժամանակին հատուկ նշանակության ուժերի հրամանատար Մ.Ջավադովին աջակցելու, ինչպես նաեւ ադրբեջանական ընդդիմությանը օժանդակելու մեջ: 2003-ին Ադրբեջանի տարածքում Իրանի համար լրտեսություն կատարելու մեղադրանքով տարբեր տվյալներով ձերբակալվել են 12-15 մարդ: Իր հերթին իրանական կողմը մի քանի անգամ ադրբեջանցիներից պահանջել է Բաքվում կանխարգելել, այսպես կոչված, «Հարավային Ադրբեջանի ազատագրման կազմակերպությունների» գործունեությունը: Չնոռանանք, որ մի շարք ամերիկյան վերլուծաբաններ նաեւ այդ կազմակերպություններին սատար կանգնելու մեջ են տեսնում Իրանի ներքին քայքայումը եւ թուլացումը:

Իրանա-ադրբեջանական հարաբերությունների ամենացավոտ կողմերից մեկը եղել է մնում է Կասպից ծովի կարգավիճակի խնդիրը: Երկու երկրների՝ կասպյան հարցի շուրջ հարաբերությունները որոշակի սրման հասան 2001-ի հուլիսին, երբ իրանական ռազմածովային ուժերի մեկ ռազմանավ ստիպեց ադրբեջանական գիտահետազոտական նավին՝ լքել Հարավային Կասպիցի Ալով, Արագ, Շարգ նավթավայրերը: Իրանական ռազմական ինքնաթիռները ցուցադրական թռիչքներ կատարեցին Կասպից ծովի հարավային հատվածում, անգամ այնքան խորացան ադրբեջանական տարածք, որ նրանց թռիչքին հնարավոր էր հետելել միանգամից մի քանի հարավային ադրբեջանական քաղաքներից:

Իրանի այս գործողությունը կարելի է բացատրել ոչ միայն վիճելի նավթահանքերի նկատմամբ նրա ունեցած հավակնությամբ, այլեւ քաղաքական այն կացությամբ, որն այն ժամանակ առաջացել էր Հարավային Կովկասում: Հիշեցնենք, որ գրեթե այդ նույն ժամանակ տեսակետներ էին հնչել, թե ամերիկյան եւ ադրբեջանական կողմերը սկսել են լրջորեն քննարկել Ադրբեջանի տարածքում ամերիկյան ռազմակայանների տեղակայման հարցը: Իրանի համապատասխան արձագանքը եղավ հենց վերը նշված սահմանամերձ պատահարը: Նշենք, որ վերոհիշյալ պատահարից հետո Սոչիում տեղի ունեցած ԱՊՀ ոչ ֆորմալ գագաթաժողովի ժամանակ Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Ղազախստանի նախագահները նախնական պայմանավորվածություն ձեռք բերեցին Կասպից ծովի բաժանման

վերաբերյալ՝ հիմնված կենտրոնագիծ բաժանման տարբերակի վրա, որը չէր համընկնում իրանական կողմի մոտեցմանը:

2001-ի հուլիսի 24-ին Ադրբեջանի վարչապետ Ա. Ռասիդադեն իր մոտ կանչեց Իրանի դեսպանին եւ նրան հայտնեց իր երկրի ղեկավարության բողոքը կատարված դեպքի առնչությամբ: Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւն անգամ պաշտոնապես հայտարարեց, որ Ադրբեջանի բանակը պատրաստ է պատասխանել ցանկացած իրանական հարձակման: Ադրբեջանի Նախարարի պետական ընկերության այն ժամանակվա փոխնախագահ Ի.Ալիեւը իրանական կողմի արարքը բնութագրեց որպես «լավ նախապատրաստված պրովոկացիա»:

Նշենք, որ նույն 2001-ին Ադրբեջանը, կանխատեսելով Իրանի հետ հարաբերությունների հետագա լարման հնարավորությունը, մի քանի փորձ կատարեց՝ ուղղված Իրանի հետ հարաբերությունների կարգավորմանը: Նման փորձերն առնչվում էին ոչ միայն քաղաքական, այլև մշակութային ոլորտին: 2001-ի սեպտեմբերին Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարի Իրան կատարած այցի ժամանակ նրան ուղեկցում էր Ադրբեջանի պետական սիմֆոնիկ նվագախումբը: Վերջինս մեկ շաբաթ համերգներ տվեց Իրանի տարբեր քաղաքներում:

2002-ի ապրիլին Իրանում Ադրբեջանի դեսպան Ա. Հասանովը լրագրողների հետ հանդիպման ժամանակ խոսեց իրանա-ադրբեջանական հարաբերություններին վերաբերող բոլոր հիմնախնդիրների մասին: Նա առաջին հերթին բացառեց երրորդ պետությունների ներքաշումը Կասպիականի հիմնախնդիրների լուծմանը: Նրա հարցազրույցը հիմնականում ուղղված էր Հ. Ալիեւի Թեհրան կատարելիք այցից առաջ Իրանի ժողովրդին եւ ղեկավարությանը դուր գալուն: Ահա այս միտքը հաստատող՝ դեսպանի արտահայտած մի քանի տեսակետներ.

1. Ադրբեջանը եւ Իսրայելը չունեն գրեթե ոչ մի համագործակցություն: Մենք անգամ թե՛ Ավիվուն չունենք սեփական դեսպանություն: Իսրայելը իր դեսպանատունը Բաքվում բացել է տակավին Էլչիբեյի օրոք: Մեզ համար այսօր այն փակելը շատ դժվար է:

2. Ադրբեջանը ԽՍՀՄ վերջին տարիներին ծրագիր էր մշակել՝ Իրանի սահմանի մոտ երկու նոր էլեկտրակայան կառուցել, որոնք պետք է էլեկտրաէներգիա մատակարարեին նաեւ Իրանին, սակայն այդ տարածքները 1990-ականների սկզբին գրավվեցին հայերի կողմից, եւ Ադրբեջանը չկարողացավ իրականացնել այդ նախագիծը:

3. Իրանա-ադրբեջանական համագործակցության զարգացման համար մեծ հիմնահարց է Իրանի՝ Հայաստանի հետ համագործակցության մակարդակը: Սակայն, ինչպես մեծահոգաբար նշեց դեսպանը, Իրանը

անկախ պետություն է, եւ Ադրբեջանը չի պատրաստվում խառնվել նրա ներքին գործերին:

2002-ի մայիսին Ադրբեջանի նախագահ Յ.Ալիեւը ժամանեց Թեհրան: Ալիեւը հանդիպեց մի շարք իրանական պաշտոնյաների, այդ թվում նաեւ Իրանի նախագահ Մ.խաթամիի եւ հոգեւոր առաջնորդ Ա.խամենեյիի հետ: Չնայած ընդհանուր առմամբ այցն անցավ նորմալ մթնոլորտում, սակայն լարվածություն, այնուամենայնիվ, նկատվում էր: Այսպես՝ լրագրողները մեկի հարցին պատասխանելով խաթամին Կասպից ծովը անվանեց Մազանդարանյան լիճ, ինչին հետեւեց Ալիեւի միջարկումը.

Ալիեւ.– Ես չհասկացա, ի՞նչ է նշանակում Մազանդարանյան լիճ:

խաթամի. – Ձեզ մոտ Կասպից ծովը անվանում են Ղազվինյան լիճ, մեզ մոտ անվանում են Մազանդարանյան: Բայց որպեսզի ոչ մի կողմը չանհանգստանա, կօգտագործենք Կասպից ծով արտահայտությունը:

Ալիեւ.– Այն միշտ էլ կոչվել է Կասպից ծով:

խաթամի.–Այո, անգլերեն այն կոչվում է Կասպից ծով:

Իրանա-ադրբեջանական հակասությունների առումով՝ կարելուր պատճառ է նաեւ ամերիկյան ռազմակայանները (ավելի շատ օգտագործվում է **մոքիլ խմբեր** արտահայտությունը) Ադրբեջանում տեղակայելու հեռանկարը, որի հնարավորությունը բավականին տեսանելի է: Այս իրողությունը Ադրբեջանին եւս դարձնում է Իրանի մրցակիցը Կասպից ծովի եւ Հարավային Կովկասի տարածքում եւ պայմանավորելու է մշտական լարվածություն իրանա-ադրբեջանական միջպետական հարաբերություններում:

**ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ.
ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ
Գագիկ Տերտերյան**

Վլադիմիր Պուտինի հաղթանակը Ռուսաստանի նախագահական ընտրություններում ի սկզբանե ակնհայտ էր, եւ վերլուծաբանները գլխավորապես ջանում էին կանխատեսել ոչ թե ընտրությունների արդյունքները, այլ Պուտինի առաջին քայլերը պաշտոնավարման երկրորդ ժամկետում: Այդ համատեքստում իրադարձություններն իրենց սպասել չտվեցին, եւ դեռ մինչ ընտրությունները Պուտինը սկսեց ձեւավորել նոր կառավարություն, որի խնդիրները սկզբնական շրջանում այնքան էլ պարզ չէին եւ սկսեցին բացահայտվել միայն վերջերս:

Միեւնույն ժամանակ կարելի է ասել, որ Ռուսաստանի վերջին տարիների տնտեսական եւ ռազմաքաղաքական ամրապնդումը արտաքին քաղաքականության ոլորտում երկակի արդյունքների է հանգեցրել: Մի կողմից՝ դա բերել է Ռուսաստանի՝ որպես Եվրասիայի կարեւորագույն աշխարհաքաղաքական գործոնի, հեղինակության մասնակի վերականգնման: Որպես հետեւանք՝ այսօր շատ կայացած երկրներ, դրանց շարքում՝ մայրցամաքային Եվրոպայի առաջատարներ Գերմանիան եւ Ֆրանսիան, ձգտում են համագործակցել Ռուսաստանի հետ տնտեսության եւ անվտանգության ոլորտներում: Մյուս կողմից՝ Արեւմուտքի համար հզոր Ռուսաստանը ավանդաբար եղել եւ մնում է անցանկալի մրցակից: Այս համատեքստում բազմացել եւ լրջացել են Ռուսաստանին նետված մարտահրավերները: Նկատենք նաեւ, որ ստեղծված իրավիճակն ունի իր առանձնահատկությունները՝ կապված ԱՄՆ – Եվրոպա խորացող հակասությունների հետ:

Կառուցվածքային բարեփոխումներ

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի նոր կառավարության կազմում նախկին 30 նախարարություններից մնացել է ընդամենը 17-ը: Ներկայումս վարչական բարեփոխումները, որոնք ընթանում են Դմիտրի Կոզակի ղեկավարությամբ, շարունակվում են: Համաձայն նոր կառուցվածքի, էապես կրճատվել է պետծառայողների թիվը: Ամեն մի նախարար ունենալու է ոչ ավելի, քան երկու տեղակալ: Ի դեպ, նախարարի տեղակալները զրկվել են ձայնի իրավունքից կառավարության միստերի ժամանակ: Ավելորդ

օղակների վերացման շնորհիվ կրճատվել է նաև դեպարտամենտների թիվը՝ 257-ից հասնելով 100-ի: Սակայն բարձրացել է դեպարտամենտի պետի կարգավիճակը (վերջինս ունի 80-100 աշխատակից եւ 2 տեղակալ), որն ընդհուպ մոտեցել է նախարարի տեղակալի կարգավիճակին: Ապարատի զգալի կրճատումը թույլ է տվել բարձրացնել պետծառայողների աշխատավարձը:

Ըստ Կոզակի, կառուցվածքային փոփոխությունների են ենթարկվելու նաև ուժային գերատեսչությունները, որոնք գտնվում են նախագահի անմիջական ենթակայության տակ: Նկատենք, որ զգալիորեն պարզեցվել է կրճատվել է նաև նախագահի աշխատակազմի թվաքանակը: Սակայն ինչպես նշում է ֆինանսների նախարար Ալ. Կուդրինը, մինչև այսօր կատարվածը կազմում է վարչական բարեփոխման ընդամենը 10%-ը եւ հիմնական զարգացումները դեռ առջեւում են: Կառավարության վերակառուցումը լուսաբանող մեկնաբանները ընդգծում են Դ. Կոզակի հատուկ դերակատարումը եւ նրա հեղինակության աճը Ռուսաստանի ներքաղաքական դաշտում (Ռուսաստանի ամենաազդեցիկ լոբբիստների ցուցակում նա այժմ գրավում է 3-րդ հորիզոնականը):

Օրենսդրական փոփոխություններ նավթամեղիքային ոլորտում

Հատկանշական է, որ նորաստեղծ կառավարության առաջին քայլը եղավ նավթային ոլորտում ստացված գերշահույթների հարկման նոր մեխանիզմի մշակումը: Համաձայն նոր օրենքի, նավթի \$20-25/բարել գնի պարագայում արտահանման հարկի տեսքով գանձվելու է շահույթի 35%-ից 45%-ը: \$25-ից բարձր գնի դեպքում գանձվելու է 45%-ից 65%-ը: Նոր օրենքը թույլ կտա համալրել բյուջեն մինչև \$2,5 մլրդ-ով: Նշենք, որ խորհրդարանական ընտրությունների ժամանակ նավթային գերշահույթների հարկման հարցը բարձրացրել էր «Ռոդինա» բլոկը, որին, համաձայն որոշ մեկնաբանների, հովանավորում էր Դ. Կոզակը: Նախկինում այս հարցը Պուտինը բազմիցս փորձել է լուծել, սակայն նախորդ կառավարությունը եւ Դուման, գտնվելով նավթամեղիքային կոմպրադորական օլիգարխների ազդեցության տակ, մշտապես այն բեկանում էին: Միաժամանակ, հատկանշական է, որ «Մատրոսկայա տիշինա» բանտում հայտնված միլիարդատեր Միխայիլ Խոդորկովսկին վերջերս ռուսաստանյան մամուլում հրապարակել էր ուղերձ, որում փաստում է ազատական գաղափարախոսության ճգնաժամը: Նա կոչ է անում ազատա-

կաններին ընդունել իրենց գաղափարական պարտությունը եւ հրաժարվել պետության դեմ հետագա պայքարից:

Նավթային գերշահույթների հարկման մեծացումը Ռուսաստանի համար առանձնապես հրատապ է հենց այս պահին: Վերջերս ՕՊԵԿ-ի՝ Վիեննայում կայացրած որոշման համաձայն, այդ կազմակերպության անդամ երկրները համատեղ կրճատել են նավթի օրական հանույթը 1 մլն բարելով (24,5 մլն-ից մինչեւ 23,5 մլն բարել), ինչի հետեւանքով սպասվում է նավթի գների զգալի աճ (մինչեւ \$40/բարել): Այսինքն՝ արդեն շուտով Ռուսաստանը կարող է լրացուցիչ խոշոր գումարներ ստանալ նավթային բիզնեսից:

Այսպիսով՝ նորովի ձեւավորելով Դումայի կազմը, վերակառուցելով վարչական ուղղահայացը եւ կոտրելով կոմպրադորական կապիտալի դիմադրությունը՝ նախագահ Պուտինը սկսեց օրենսդրական բարեփոխումները ռազմավարական նշանակություն ունեցող նավթավառելիքային ոլորտում, ինչը նրան չէր հաջողվում նախկինում: Սակայն ռուսաստանյան հիմնախնդիրների ցանկը չի սահմանափակվում ներքին հարցերով:

ՆԱՏՕ-ի առաջխաղացումը

Ինչպես հայտնի է, վերջերս յոթ երկրներ՝ Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Սլովակիան, Սլովենիան, Ռումինիան եւ Բուլղարիան, պաշտոնապես ընդունվեցին ՆԱՏՕ: Այս փաստը կարելի է ռազմաքաղաքական նշանակություն ունի եւ տեղիք է տալիս տարաբնույթ մեկնաբանությունների: Նոր երկրների անդամագրումը ՆԱՏՕ-ին նշանակում է, որ արեւմտյան զինուժը ընդհուպ մոտեցել է Ռուսաստանի սահմանին: ՆԱՏՕ-ի ինքնաթիռները, դեռ չսպասած վերոհիշյալ հանրապետությունների ՆԱՏՕ ընդունվելու պաշտոնական արարողությանը, արդեն սկսել էին պարեկային թռիչքներ իրագործել բալթյան երկրների օդանավակայաններից: Ուշադրության է արժանի այն փաստը, որ պարեկային թռիչքները կատարում էին ոչ թե հակաօդային պաշտպանության F-15 տիպի կործանիչները, այլ F-16 տիպի գրոհային ինքնաթիռները, որոնք նախատեսված են ցամաքային օբյեկտները ռմբակոծելու եւ հրթիռային հարվածներ հասցնելու համար: F-16 ինքնաթիռներն ի վիճակի են հասնել ոչ միայն Պետերբուրգ (8 ռոպեում), այլ նաեւ Մոսկվա:

Բալթյան հանրապետություններում տեղադրվել են նաեւ ռադիոլոկացիոն սարքեր, որոնք թույլ են տալիս տեղեկատվություն հավաքել Ռուսաստանի եվրոպական մասի օդային տարածքի մասին: ՆԱՏՕ-ի դիրքերի առաջխաղացմանը զուգահեռ, ծրագրված է Գերմանիայում

գտնվող ամերիկյան 70 հազարանոց ռազմական խմբավորման մի մասը տեղափոխել Լեհաստան, Բուլղարիա եւ Ռումինիա:

Վերոհիշյալ գործոնները ստիպում են Ռուսաստանին համարժեք քայլեր կատարել եւ լրացուցիչ ուժեր կենտրոնացնել՝ իր արեւմտյան սահմանները պաշտպանելու համար (ՆԱՏՕ-ի առաջխաղացումը առանձնապես խոցելի է դարձնում անկլավային Կալինինգրադի մարզը): Ռուսական օդուժը արդեն սկսել է պատասխան հետախուզական եւ պարեկային թռիչքներ կատարել Բալթիկայում: Նման իրողությունը Ռուսաստանի համար հղի է նաեւ տնտեսական հետեւանքներով: Սառը պատերազմի տարիներին ԱՄՆ-ը հմտորեն օգտագործում էր սպառազինությունների մրցավազքը՝ ԽՍՀՄ-ը տնտեսապես հյուժելու նպատակով: Ներկայիս իրավիճակը, ինչպես նաեւ ԱՄՆ-ի կողմից միջուկային, հրթիռային եւ տիեզերական նոր համակարգերի մշակումը ստիպում են Ռուսաստանին զգալի միջոցներ ծախսել ռազմական ոլորտում: Սակայն ռազմավարական առումով Ռուսաստանի համար ավելի նշանակալի է հետեւյալ հանգամանքը:

Հայտնի է, որ Արեւմուտքը գործում է հետեւողականորեն: Վերոհիշյալ «յոթնյակի» միանալը ՆԱՏՕ-ին այդ կազմակերպության ընդլայնման գործընթացի փուլերից մեկն է ընդամենը: Այժմ օրակարգի հարց է դառնում Մակեդոնիայի, Խորվաթիայի, Ուկրաինայի, որոշ զարգացումների դեպքում՝ Սոլդովայի անդամագրվելը ՆԱՏՕ-ին: Եթե այդ ծրագրերը իրագործվեն (իսկ դրա համար կան հիմքեր եւ նախապայմաններ), ապա դա համարժեք է պուտինյան Ռուսաստանի ներկա փուլի գլխավոր ռազմավարական նպատակի տապալմանը, այն է՝ վերականգնել իր գերակայությունը հետխորհրդային տարածքում:

ՆԱՏՕ-ի ընդլայնման գործընթացը վերհանում է աշխարհաքաղաքական (օրինակ՝ Գերմանիայի կողմից Կալինինգրադի մարզի նկատմամբ ունեցած հավակնությունները) եւ տնտեսական շահերի այն հակասությունները, որոնք գոյություն ունեն Ռուսաստանի եւ Եվրոպայի եվրակենտրոն տերությունների (առաջին հերթին՝ Գերմանիայի եւ Ֆրանսիայի) միջեւ: Այդ օբյեկտիվորեն գոյություն ունեցող հակասությունները, թվում է, հերքում են այն ռազմավարական ընդհանրությունը, որը ԱՄՆ էքսպանսիայի հետեւանքով ձեւավորվել էր Ռուսաստանի եւ վերոհիշյալ եվրակենտրոն տերությունների միջեւ:

Ռուսաստան, Եվրոպա, ԱՄՆ. աշխարհաքաղաքական հեռանկարի անորոշություն

Աշխարհաքաղաքական իրադրության փոփոխման հետեւանքով, ներկայումս Եվրասիան մասամբ վերածվել է ռազմական, տնտեսական եւ քաղաքակրթական (առաջին հերթին՝ արժեքային համակարգերի համատեքստում) էքսպանսիայի օբյեկտի ԱՄՆ-ի կողմից: Ակնհայտ է նաեւ, որ տեսանելի ապագայում Եվրասիական որեւէ տերություն ի վիճակի չի լինելու միայնակ պայքարել այդ գերտերության դեմ: Այս իրողությունն է, որ ընկած է Փարիզ – Բեռլին աշխարհաքաղաքական առանցքի հայեցակարգի հիմքում:

Եվրոպական ստրատեգների նախագծած՝ Եվրասիական աշխարհակարգի պատկերը ենթադրում է Ռուսաստանի մասնակցությունը, առանց որի այդ կառուցվածքը թերի է: Նման մոտեցումը պահանջում է նոր աշխարհաքաղաքական ծրագրի մասնակիցների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Ռուսաստանի պատմական դերակատարման վերագնահատում (այս մոտեցման հեղինակներն են համարվում Շառլ դը Գոլը եւ Կոնրադ Ադենաուերը): Այս համատեքստում Ֆրանսիայի եւ Գերմանիայի ներկա դեկավարները գտնում են, որ ՆԱՏՕ-ի առաջխաղացումը առաջին հերթին Եվրոպայի առաջխաղացումն է Արեւելք եւ որ նրանք այդպիսով մոտենում են իրենց ապագա դաշնակցին՝ Ռուսաստանին, որպեսզի հետագայում ձեւավորեն մի միասնական աշխարհաքաղաքական ենթակառուցվածք:

Բնորոշ է, որ վերջերս Սոսկվա ժամանած կանցլեր Շրյոդերի եւ Նախագահ Շիրակի հանդիպումը Պուտինի հետ անցավ ավելի քան ջերմ մթնոլորտում: Խիստ հատկանշական է նաեւ Պուտինի այն հայտարարությունը, թե ինքը դեմ չէ, որ ապագա Եվրոպայի (որին անդամակցելու է նաեւ Ռուսաստանը) մայրաքաղաքը լինի Բրյուսելը: Այս հայտարարությունը ակնհայտորեն աշխարհաքաղաքական բնույթ է կրում եւ թերեւս խտացրած արտացոլում է Պուտին – Շրյոդեր – Շիրակ բանակցությունների եթե ոչ բովանդակությունը, ապա մթնոլորտը: Անշուշտ, նման մոտեցումը ենթադրում է ԱՄՆ դերակատարման նվազեցում Եվրոպական գործընթացներում: Ինչպես ցույց են տալիս վերջին զարգացումները, դա անելը խիստ դժվար է, բայց ոչ անհնար:

Օբյեկտիվ մոտեցման պարագայում կարելի է արձանագրել, որ ներկա պահին Արեւելյան Եվրոպայի եւ բալթյան հանրապետությունների ՆԱՏՕ ընդունվելը որոշակիորեն փոխում է ուժերի դասավորությունը Եվրամիության շրջանակներում: Իր հերթին սկզբունքային հակասությունները Ֆրանսիայի եւ Գերմանիայի ու ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի

միջեւ խորացման միտում ունեն: Մրցակցող այդ խմբերի միմյանց դեմ վարած քաղաքականության հիմնական նպատակներից է՝ իրենց ազդեցության ոլորտ ներքաշել եվրոպական այլ երկրների: Հայտնի է նաեւ, որ ԱՄՆ-ը ռազմաքաղաքական առումով առաջնային դիրք է գրավում ՆԱՏՕ-ում, եւ այդ տեսակետից վերոհիշյալ «յոթնյակի» (որոնք ռազմատեխնիկական առումով թույլ են եւ առանց ԱՄՆ օգնության չեն կարող բավարարել ՆԱՏՕ-ի պահանջները) անդամակցոււնը Հյուսիսատլանտյան դաշինքին կարծես թէ մեծացում է նրանց կախվածությունը ԱՄՆ-ից: Այսպիսով՝ «յոթնյակի» ՆԱՏՕ-ին անդամագրվելը կարելի է դիտարկել որպես եվրոպայում անգլո-սաքսերի դիրքերի ամրապնդում: Սակայն եթե քաղաքական գործընթացները դիտարկենք դիմամիկայում, գնահատականները կարող են եւ փոխվել:

Վերջին ժամանակահատվածում, կապված Իրաքում ԱՄՆ կրած անհաջողությունների հետ, եվրոպական որոշ երկրներ փոխում են իրենց մոտեցումները ԱՄՆ-ի նկատմամբ: Ինչպես հայտնի է, իսպանական նորընտիր իշխանությունները մտադիր են դուրս հանել իրենց զինուժը Իրաքից, ԱՄՆ-ի նկատմամբ դժգոհություն է սկսել արտահայտել Լեհաստանը, ԱՄՆ-ի հանդեպ իտալացիների դիրքորոշումներում կարելի է նկատել աճող երկիմաստություն:

Թերեւս եվրոպայում իշխող տրամադրությունների արտահայտությունն է այն փաստը, որ Իսպանիայի վարչապետն իր ընդունարանում 30 րոպե սպասել է տվել Քոլին Փաուելին: Անշուշտ, այս ամենը բնավ չի վկայում, որ եվրոպական երկրները (որոնք բոլոր դեպքերում հակված են ԱՄՆ-ը դիտարկել որպես օտար մարմին) վերջնականորեն հետ են կանգնում ատլանտյան զաղափարներից եւ ընդունում են եվրակենտրոն դիրքորոշում: Մարտավարական տեսակետից հնարավոր են անգամ առկա միտումների ժամանակավոր փոփոխություններ: Սակայն աշխարհաքաղաքական տրամաբանությունը օբյեկտիվ բնույթ է կրում, իսկ ժամանակը միշտ աշխատում է տեղաբնակների օգտին: Այսօր վերլուծաբաններից շատերն են հակված կարծելու, թե ՆԱՏՕ-ն՝ որպես ատլանտյան կառույց, 2006 - 2007 թվականներին կարող է փլուզվել եւ վերածվել ուղղակի ԵՄ զինված ուժերի: Այդ պարագայում Բրյուսելի համաեվրոպական մայրաքաղաք դառնալն արդեն ընկալելի կդառնա:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ

Սարգիս Հարությունյան

Ա. Իրաքում ընթացող պատերազմական նոր գործողությունների սկիզբ կարելի է համարել մարտի 31-ը, երբ Բաղդադից արեւմուտք ընկած Էլ-Ֆալուջա քաղաքում (Ռամադի եւ Բակուբա քաղաքների հետ կազմում է, այսպես կոչված, «սուննիական եռանկյունին»), որում կենտրոնացած է սուննի ապստամբ ուժերի էական մասը) դաժանաբար սպանվեցին ամերիկացի չորս քաղաքացիական պաշտոնյա: Ամերիկյան ուժերը փակեցին քաղաքը՝ կատարողներին ձերբակալելու նպատակով, որից հետո ողջ «եռանկյունով» մեկ սկսվեցին զանգվածային հարձակումները ամերիկյան զինուժի վրա:

Եթե սուննիական հուզումները կանխատեսելի էին (հիշեցնենք, որ Սադամ Հուսեյնը եւ Իրաքի նախկին իշխանական գրեթե ողջ վերնախավը սուննի էր, ինչը նշանակում է հակամերիկյան գործողությունների կազմակերպչական լայն ցանց), ապա այդ առումով, թերեւս, քիչ հավանական էր դիտվում «շիական ճակատի» բացումը:

Ապրիլի 3-ին Իրաքի ժամանակավոր իշխանությունները փակեցին Էն-Նաջաֆ քաղաքում հրատարակվող շիա արմատականների «Ալ-Հաուզ» պարբերականը եւ ձերբակալեցին Իրաքի շիաների արմատական առաջնորդ 31-ամյա Մուքթադի աս-Սադրի համախոհներից մեկին: Այդ կապակցությամբ շիաների բողոքի ցույցը ավարտվեց ամերիկյան զինվորականների հետ բախումներով, ինչի արդյունքում մի քանի իրաքցի սպանվեց: Ի պատասխան՝ Քուֆա քաղաքում գտնվող աս-Սադրը կոչ արեց իր համախոհներին «ահաբեկել իրենց թշնամիներին»:

Արդեն իսկ ապրիլի 4-ից սկսվեցին շիաների զանգվածային հարձակումները ամերիկյան զորամիավորումների եւ կռակիցիայի մյուս ուժերի վրա: Ապստամբեց աս-Սադրին հավատարիմ Բաղդադի ամենաաղքատ «մադինաթ Սադր» («Սադրի քաղաք») թաղամասը, որը նախկինում կոչվում էր «մադինաթ Սադամ» եւ որը անցած տարի աս-Սադրի կողմից վերանվանվեց ի պատիվ իր հոր՝ մինչեւ 1999թ. (երբ սպանվեց բանտում) Իրաքի շիաների գերագույն հոգեւոր առաջնորդ Մոհամեդ Սադեկ Սադրի անունով: Բաղդադի մյուս թաղամասում՝ Քահեթի, աս-Սադրի կողմնակիցները գրավեցին ոստիկանական բաժանմունքը: Հուզումները տարածվեցին Իրաքի ողջ տարածքում՝ Քիրքուկ, Մոսուլ, Էն-Նասերիա, Բասրա եւ

այլն: Օրինակ՝ Բասրայում շիաները կարողացան գրավել նահանգապետի նստավայրը եւ շենքի տանիքին բարձրացնել իսլամի կանաչ դրոշը: Տեղի ուստիկանությունը անցավ ապստամբների կողմը:

Ընդհանուր առմամբ, ապրիլի 14-ի դրությամբ, կռաւիցիոն ուժերը մարտերում կորցրել են մոտ 70 հոգի՝ սպանված եւ վիրավոր, խփվել է ամերիկյան երեք ուղղաթիռ եւ մի քանի զրահամեքենա: Իրաքցի սուլունիների եւ շիաների կորուստները կազմում են մոտ վեց հարյուր հոգի սպանված:

Բ. Առկա իրավիճակում հատկապես կարեւորվում է իրաքցի շիաների (2003թ. ամռան տվյալներով շիաները Իրաքում 15 մլն էին, Իրաքի ողջ բնակչության՝ 25 մլն, 60%-ը) եւ նրանց արմատական առաջնորդ Մուքթադի աս-Սադրի գործունը: Մոհամեդ Սադեկ Սադրի որդին լինելը արդեն իսկ քաղաքական կապիտալ է, սակայն Սադամ Հուսեյնի տապալումից հետո Մուքթադի աս-Սադրին չէր էլ մտնում այն շիա հոգեւորականների ցանկի մեջ, որոնք կարող էին առաջնորդել Իրաքի բազմաքանակ շիա համայնքը: Այդ պայմաններում իր դերը խաղաց արմատականությունը, որը հետսադամյան Իրաքի պարագայում հավասարազոր է պոպուլիզմի, ինչն էլ բարձրացրեց Մուքթադի աս-Սադրի հեղինակությունը:

Շիա այաթուլաների ռազմավարությունն այն է, որ, օգտագործելով իրենց մեծաքանակ լինելը եւ սուլունիների պարտիզանական պայքարը, Փոլ Բրենների վարչակազմից ստանան իշխանական լծակներ՝ ի վերջո դառնալով Իրաքի լիիրավ տերը: Նման ռազմավարության մեխանիզմը՝ բանակցություններն են սեղանի շուրջ, ինչին կտրուկ դեմ է աս-Սադրին: Ամերիկյան ներկայության դեմ զինված պայքարի կոչերը, ինչպես նաեւ նույն այդ ամերիկյան վերահսկողությունից (հետեւաբար՝ կանխատեսելիությունից) դուրս գտնվելը վերջինիս դարձրին հետսադամյան Իրաքի հակամերիկյան շարժման խորհրդանիշը կամ առնվազն խորհրդանիշներից մեկը:

Մուքթադի աս-Սադրի քաղաքական ազդեցությունը սկսեց աճել, երբ 2003թ. գարնանից, շիաների կրոնական երթերի անվտանգությունն ապահովելու պատրվակով, նա սկսեց ձեւավորել իր ռազմական ստորաբաժանումները՝ «Մահդիի բանակ» (շիաների վերջին՝ 12-րդ իմամը՝ Մահդիին, որը, ըստ ավանդույթի, թաքնվել է եւ ի հայտ է գալու «Բարու» եւ «Չարի» միջեւ վճռական կռվից առաջ): Ամերիկյան գնահատականներով, «Մահդիի բանակում» ընդգրկված է մոտ երեք հազար մարդ, սակայն իրեական «DEBKA» վեբ-կայքի տվյալներով՝ «երեք հազար» թիվը

վերաբերում է աս-Սադրի սոսկ այն զորամիավորումներին, որոնք ներկայում կենտրոնացած են Բաղդադի, Էն-Նաջաֆի եւ Քերբալայի շրջաններում: Ըստ տարբեր գնահատականների, «Մահդիի բանակի» թվակազմը կարող է հասնել մինչեւ 10 հազար մարդու: Ի դեպ, նույն «DEBKA»-ի հավաստմամբ՝ «սուննիական եռանկյունում» ընթացող հուզումներին մասնակցում են նաեւ «Մահդիի բանակի» շատ զինվորներ:

Իրաքի քաղաքական դաշտում Մուքթադի աս-Սադրի «առանձնաճակում» նպաստեց նաեւ մի շարք ազդեցիկ այաթուլաների մահը: Ըստ որոշ տեղեկությունների, աս-Սադրին անձամբ շահագրգռված էր քաղաքական մրցակիցների վերացմամբ: Այսպես, օրինակ՝ 2003թ. ապրիլին Լոնդոնից հայրենիք նոր վերադարձած երիտասարդ, ազատական այաթուլա Աբդել Մաջիդ ալ-Յոյին (չիա հայտնի հոգեւորականի որդին), որի հետ ամերիկացիները մեծ հույսեր էին կապում, սպանվեց Էն-Նաջաֆ քաղաքի մզկիթներից մեկի մոտ՝ բախվելով աս-Սադրի թիկնապահների հետ (հենց այդ սպանության հետ է կապված աս-Սադրի ծերբակալման հրահանգը): Եվս մեկ հայտնի այաթուլա՝ Մոհամադ Բաքր ալ-Յաքինը, որը ղեկավարում էր Իրանից Իրաք վերադարձած «Իսլամական հեղափոխության բարձրագույն խորհուրդը» (ԻՉԲԽ), օգոստոս ամսին զոհ գնաց պայթուցիկով բեռնված ավտոմեքենայի պայթյունից, երբ ուրբաթօրյա աղոթքից հետո դուրս էր գալիս նույն քաղաքի մզկիթներից մեկից: Մուքթադի աս-Սադրը բախվեց նաեւ շիաների ներկայիս բարձրագույն հոգեւոր առաջնորդ, այաթուլա Ալի Սիստանիի հետ. Քերբալա քաղաքում աս-Սադրի կողմնակիցները ընդհարվելով Սիստանիի թիկնազորի հետ՝ փակվեցին քաղաքի մզկիթներից մեկում, սակայն ստիպված եղան նահանջել:

Սիստանիի կապակցությամբ հարկ է ուշադրություն դարձնել ստեղծված իրավիճակում նրա դիրքորոշմանը: Մի կողմից Ալի Սիստանին դատապարտում է այն մեթոդները, որոնք կիրառում են ամերիկացիները ընդդեմ շիաների եւ սուննիների, իսկ մյուս կողմից՝ այաթուլան շիաներին հանգստության կոչ է անում: Սիստանիի կեցվածքը կարող է վկայել Փոլ Բրենների վարչակազմի հետ երկխոսության գնալու նրա պատրաստակամության մասին, մանավանդ որ շիաների բարձրագույն հոգեւոր առաջնորդը այլեւս չի պնդում մինչեւ սույն թվականի հուլիսի 1-ը Իրաքում անցկացնել համազգային ընտրություններ:

Ներկայում, համաձայն որոշ տեղեկությունների, Մուքթադի աս-Սադրը գտնվում է Էն-Նաջաֆ քաղաքում եւ այնտեղից է ղեկավարում շիաների հարձակումները կռալիցիոն ուժերի դեմ:

Գ. Այս ամենի մեջ հարկ է կարելորել սույն թվականի նոյեմբերին ԱՄՆ-ում կայանալիք նախագահական ընտրությունները: Էլ-Ֆալուջայում մարտի 31-ին սպանված չորս ամերիկացիների դիակների ցուցադրումը ամերիկյան գրեթե բոլոր առաջատար հեռուստաալիքներով կարելի է որակել որպես «տեղեկատվական ռումբ» Միացյալ Նահանգների հասարակական կարծիքի համար: Այդ առումով «Էլ-Ֆալուջան» ուղղակիորեն հարվածում է Ջորջ Բուշ-կրտսերի վարկանիշին: Ուստի եւ ամերիկյան հանրությանը պետք է ի ցույց դրվեր պաշտոնական վաշինգտոնի քաղաքական վճռականությունը՝ «պատժելու մեղավորներին»: Թերեւս, դրանով կարելի է բացատրել ամերիկյան զինուժի բավականին կտրուկ ու կոշտ գործողությունները:

Ընդհանրապես, հարկ է նշել, որ Մերձավոր Արեւելքում իրավիճակի ապակայունացումը չի խոսում ԱՄՆ առաջիկա նախագահական ընտրություններում հանրապետականների շահերի օգտին: Եվ այդ լույսի ներքո, որպես տեսակետ՝ կարելի է ներկայացնել շեյխ Յասինի սպանության կապը Իրաքում առկա իրավիճակի ու ԱՄՆ նախագահական ընտրությունների միջեւ: Կարելի է ենթադրել, որ նման ճանապարհով ԱՄՆ հրեական լրբքին եւ Իսրայել պետության վերնախավը փորձում են ապահովել Ջիմ Քերիի հաղթանակը կամ «ստանալ» զգալիորեն թուլացած Ջորջ Բուշ-կրտսեր նախագահ:

Դ. Հասկանալի է, որ Իրաքում ստեղծված իրավիճակի հիմնական պատճառը ամերիկյան ռազմական օկուպացիայի դեմ ուղղված իրաքցիների դժգոհությունն է: Ընդ որում, անհրաժեշտ է ընդգծել, որ Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո իրավիճակը երկրում, փաստորեն, չի մտել իր բնականոն հունի մեջ, եւ այդ առումով Փոլ Բրենների վարչակազմի ջանքերը քիչ արդյունավետ են:

Երկրորդ՝ առկա իրավիճակը վկայում է մերձավորարեւելյան գործընթացներում էական ազդեցություն ունեցող «ուժի կենտրոնների» միջեւ փոխհամաձայնության առնվազն ցածր մակարդակի մասին: Ի հավելումն՝ լարվածության նման աճը անգամ կարող է վկայել որեւիցե փոխհամաձայնության բացակայության մասին: Այսինքն՝ իրավիճակի զարգացման տեսանկյունից՝ Միացյալ Նահանգների եւ նրա դաշնակիցների ու Մերձավոր Արեւելքում նրանց հիմնական ընդդիմադիրների՝ Իրանի, Սաուդյան Արաբիայի, Ռուսաստանի եւ «եվրոպական կենտրոնի» (Ֆրանսիա-Գերմանիա) միջեւ առկա հակասությունների հաղթահարման հավանականությունը մոտ ապագայում քիչ է:

«Ուժի կենտրոններից» անհրաժեշտ է առանձնացնել Իրանի եւ Սաուդյան Արաբիայի գործոնը կամ, ավելի ճիշտ՝ Իրաքի հարցում, ամենայն հավանականությամբ, նրանց համագործակցության գործոնը: Այդ առումով, ամենեւին էլ պատահական չպետք է դիտել այն հանգամանքը, որ միմյանց հետ խնդիրներ ունեցող Իրաքի սուլենի եւ շիա համայնքներն այսօր միասնական են հանդես գալիս ամերիկյան ուժերի դեմ:

Լոնդոնում հրատարակվող «Ալ-Շարք ալ-Աուսաթ» (արբ.՝ «Մերձավոր Արեւելք») օրաթերթի ապրիլի 3-ի համարում Հաջ Սայիդ անվամբ իրանական հատուկ ծառայության նախկին մի աշխատակից, որը 2003թ. վերջին ապաստան է խնդրել Մեծ Բրիտանիայում, նշում է, թե Իրանը առնվազն 18 հետախուզական կենտրոններ է պահում Իրաքում: Հաջ Սայիդի պնդմամբ, վերջին 18 ամսում Իրանը ուխտագնացների եւ փախստականների տեսքով Իրաք է ուղարկել «մի քանի հարյուր գործակալներ»:

Պետք է ասել, որ, փաստորեն, Իրաքը Թեհրանի համար հանդես է գալիս թե՛ Մեծ Մերձավոր Արեւելքում ԱՄՆ հետագա առաջխաղացումը կանխելու, թե՛ նույն այդ ԱՄՆ-ի հետ հաշտության եզրեր գտնելու միջոց (ապրիլի 14-ին հայտնի դարձավ, որ ԱՄՆ-ը՝ Թեհրանում իր շահերը ներկայացնող Շվեյցարիայի դեսպանատան միջոցով, պաշտոնապես դիմել է Իրանին Իրաքում իրավիճակը կայունացնելուն ուղղված օգնության խնդրանքով): Այդ առումով, Իրաքում ներկայում առկա ապակայունության մեջ զգալի ներդրում ունի Իրանը: Իրանական ազդեցությունը Իրաքում տարածվում է Իրաքի «Իսլամական հեղափոխության բարձրագույն խորհրդի» (**ապրիլի 11-ին ԻԻՀ նախագահ Մուհամադ Խաթամին հայտարարեց, թե Իրանը սատարում է ԻՀԲԽ-ի առաջնորդ Աբդուլ Ազիզ ալ-Հակիմին. նշենք, որ, ըստ ամերիկյան հետախուզության տվյալների, ԻՀԲԽ-ի տրամադրության տակ են գտնվում մոտ 30 հազար զինված մարտիկներ**), Իրաքում իրենց գրասենյակները բացած «Յեզբուլահ» եւ «Համաս» կազմակերպությունների եւ, ամենայն հավանականությամբ, նույն Մուքթադի աս-Սադրի միջոցով: Այլ կերպ ասած, Իրանն ի վիճակի է ապակայունացնել իրավիճակը Իրաքում:

Հետսահամյան Իրաքի ապակայունությունը լուրջ խոչընդոտ է վաշինգտոնի «Մեծ Մերձավոր Արեւելք» նախագծին եւ, միաժամանակ, բարձր է պահում նավթի համաշխարհային գները: Նման իրավիճակը ձեռնտու է Իրանին, Սաուդյան Արաբիային եւ Ռուսաստանին. պահպանվում եւ անգամ ուժեղանում է նրանց աշխարհաքաղաքական ազդեցությունը տարածաշրջանում, իսկ նավթի գները, որոնք շատ էական են այդ երկրների տնտեսական աճի համար, շարունակում են մնալ բարձր:

Կանխատեսման առումով կարելի է ասել, որ նվազ հավանական է, թե ԱՄՆ-ը դուրս կգա Իրաքից: Այդ դեպքում նա կկորցնի գրեթե ամեն ինչ՝ իր ռազմավարական առավելությունը Եվրասիայում, աշխարհաքաղաքական ազդեցությունը Մերձավոր Արեւելքում եւ վերջապես նավթի ակնկալվող ցածր գները: Մյուս կողմից, Միացյալ Նահանգների ներկայությունը արդեն իսկ հարուցում է շատ որոշակի խնդիրներ ամերիկյան դիվանագիտության համար: Սուենի-շիական հուզումները լուրջ մարտահրավեր են հակասադամյան կոալիցիայի (արդեն իսկ կոալիցիայի անդամ երկրները խնդիրների են բախվում սեփական հասարակական կարծիքի առումով), ուստի եւ՝ ԱՄՆ միջազգային քաղաքականության համար:

**ՄԱՅՄԵԴԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Արաքս Փաշայան**

Մահմեդական հասարակություններում ընտանիքը հատուկ դերակատարություն ունի, եւ ընտանիքին ամենավոդ բոլոր օրենքները ամրագրված են շարիաթով: Ամուսնության եւ ընտանեկան կենցաղավարության մասին համապատասխան եւ բավական ընդգրկուն դիտարկումներ կան Ղուրանում, որը ոչ միայն դավանաբանության աղբյուր է, այլեւ պայմանավորում է մահմեդական հասարակության բարոյական, սոցիալական, իրավական եւ կենցաղային կողմերը: Ղուրանի մի շարք սուրահներ եւ այաթներ վերաբերում են նշված խնդիրներին:

Մահմեդական հասարակություններում ընտանիքի ինստիտուտը էապես տարբերվում է արեւմտյանից կամ արեւելյան-քրիստոնեականից եւ ունի իր ամենաձեռնհասությունները: Իսլամը բացասական վերաբերմունք ունի ամուրիության եւ կուսակրոնության հարցում եւ նույնիսկ չի արգելում անչափահասների ամուսնությունը: Ղուրանում նշված է, որ ամուսնությունը բոլոր մահմեդականների պարտքն է, իսկ հակառակն անհնար է:

Ընտանիքը ծեւավորվում է ամուսնական պայմանագրով (**ակդ ալ-զաուաջ**), ուր սահմանվում են դրա իրավական, նյութական եւ բարոյական կողմերը: Պայմանագիրը վավերացվում է վկաների ներկայությամբ: Դրանում սահմանվում է հարսնացուին փեսացուի կողմից տրվող **մահրը** (բառացի՝ բաժինք), որ երկու մասից է կազմված՝ **մուկադդամ** եւ **մուախար**: Փեսացուն պարտավոր է նախքան ամուսնանալը հարսնացուին կամ նրա հորը վճարել նախօրոք աղջկա կողմից սահմանված **մուկադդամը**, որից հետո միայն կարող է մոտենալ իր կնոջը: **Մուախարը** վճարվում է ամուսնությունից հետո: Դրա չափն ու ժամկետը վերստին որոշում է աղջկա կողմը:

Իսլամական հասարակություններում ընտանիքում գերակա դիրք ունի տղամարդը, որը մինչեւ չորս անգամ ամուսնանալու իրավունք ունի: Ամուսինը պարտավոր է հավասարապես եւ արդարամտորեն վերաբերվել բոլոր կանանց՝ նրանցից յուրաքանչյուրի համար համապատասխան սոցիալական պայմաններ ապահովելով: Ամուսինն իրավունք չունի չորս ամսից ավելի հեռու մնալ կնոջից, այլապես վերջինս կարող է վիճարկել

ամուսնական պայմանագիրը: Ներկայումս բազմակնությունը, մասնավորապես քաղաքային շրջաններում, նվազելու հակվածություն ունի:

Շարիաթը հստակ պարտավորություններ է սահմանել ամուսնացած կնոջ համար, որով եւ ամրագրվում է նրա դերը ընտանիքում եւ հասարակության մեջ: Կինը պարտավոր է զբաղվել կենցաղավարությամբ, հոգ տանել ընտանիքին, ամուսնուն եւ զավակներին:

Նա իրավունք չունի առանց հատուկ պատճառների հեռու գտնվել ամուսնուց: Իսլամի սոցիալական հայեցակարգի ամենապահպանողական սկզբունքներից մեկը կանանց «մեկուսացվածությունն» է: Մահմեդական կանանցից պահանջվում է քողարկել մարմնի բոլոր մասերը, իսկ մազերին **հիջաբ** (կամ գլխաշոր) կրել: Իսլամի առանձին ուղղությունների ներկայացուցիչներ պահանջում են, որպեսզի իրենց կանայք շղարշեն անգամ երեսը, մատները, սրունքները մինչեւ վերջ: Մահմեդական երկրներում **հիջաբի** կամ թիկնոցների սահմանված ձեւ գոյություն չունի: Կինն անգամ իր հարկի տակ իրավունք չունի որեւէ մեկի առաջ (բացի ընտանիքի անդամներից, նաեւ հորից եւ եղբորից) հայտնվել առանց գլխաշորի: Այդ իսկ պատճառով հյուրը, ցանկացած օջախ մտնելուց առաջ, պարտավոր է նախազգուշացնել կամ ազդարարել իր մուտքը՝ մի քանի անգամ թակելով դուռը, որպեսզի կանայք կարողանան մազերը ծածկել: Ցանկալի չէ, որպեսզի տան կինը ներկա գտնվի հյուրընկալված օտար տղամարդկանց շրջապատում: Այս իսկ պատճառով հաճախ տան կանայք հյուրասիրությունը իրականացնում են անուղղակի՝ դրանով իսկ խուսափելով հյուրերի առաջ երեւալուց:

Երեսին զցված քողը կնոջ համար մեծ դժվարություններ է ստեղծում հատկապես հասարակական վայրերում կողմնորոշվելու կամ սնվելու դեպքում: Նա ստիպված է զգուշորեն բարձրացնել այն, որպեսզի չբացահայտվի: Այդ իսկ պատճառով իսլամական երկրներում ճաշարաններում կան առանձնացված, ընտանիքի համար նախատեսված սենյակներ: **Չիջաբ** կրող կանայք երբեք չեն լուսանկարվում բաց մազերով եւ բաց հագուստով:

Իսլամում մեծ ուշադրություն է դարձվում, որպեսզի կինը զերծ մնա գայթակղություններից: Կինն իրավունք չունի մտնել օտար տղամարդու բնակարան: Իր հերթին տղամարդը պետք է խուսափի սեւեռուն նայել օտար կնոջ մազերին, դեմքին կամ ձեռքերին, առավել եւս սիրահետել նրան: Այդ իսկ պատճառով կինը պետք է փակ հագուստներ եւ գլխաշոր կրի՝ տղամարդուն գայթակղությունից զերծ պահելու համար: Կնոջը գայթակղությունից հեռու պահելու համար է, որ իսլամը քաջալերում է այրիացած կնոջն ամուսնանալ:

Իսլամում կինը դաժանորեն պատժվում է ամուսնուն դավաճանելու համար՝ համաձայն շարիաթով ամրագրված նորմերի: Առավել պահպանողական երկրներում կինը կարող է մահվամբ հատուցել իր արարքի համար: Սակայն դավաճանությունը փաստելու համար անհրաժեշտ է երեք անձանց վկայությունը:

Ուշագրավ է, որ իսլամը մահմեդական աղջկան կամ կնոջը արգելում է ամուսնանալ «անհավատի» (այսինքն՝ հեթանոսի), քրիստոնյայի կամ հրեայի հետ՝ մինչև նրանք իսլամ չընդունեն: Տղամարդը ընդհանուր առմամբ կարող է ամուսնանալ այլադավանի հետ՝ հուսով, որ վերջինս հետամուտ կլինի դավանափոխության: Սակայն շարիաթը չի ստիպում մահմեդականի հետ ամուսնացած քրիստոնյա կամ հրեա կնոջն իսլամ ընդունել: Նրանից ծնված զավակները մահմեդական են եւ ապահարգանվելու դեպքում հանձնվում են հոր խնամքին:

Ղուրանում, ինչպես նաեւ իսլամի սոցիալական հայեցակարգում բավական հանգամանալից կերպով ներկայացված է ապահարգանք՝ **(տալակ)**, որ մեծ մասամբ նախաձեռնում է ամուսինը: Այս հանգամանքը փաստում է տղամարդու գերակայությունը ընտանիքում: Ուսումնասիրողների կարծիքով՝ ապահարգանք իսլամական իրավունքում, ի տարբերություն ապահարգանի աշխարհիկ եւ կրոնական այլ օրենքների, չափազանց պարզ է եւ զերծ ձեւական կողմերից: Այն գրեթե չի առնչվում այդ գործընթացին հատուկ իրավական խնդիրների հետ: Հետաքրքիր է, որ իսլամը բավական դյուրին պայմաններ է ստեղծում ապահարգանի համար: Բավական է, որպեսզի ամուսինը առանց բացատրության եւ ցանկացած պահի երեք անգամ կրկնի, թե կինը ազատ է կամ ապահարգանված, որն անմիջապես օրենքի ուժ է ստանում: Դրանից հետո ամուսինները միմյանց համար դառնում են արգելված՝ **հարամ**, եւ կինը պետք է լքի տունը՝ ամուսնուն թողնելով զավակներին: Առանձին դեպքերում ապահարգանի իրավունք ունի նաեւ կինը, որը շարիաթի համաձայն, կարող է բաժանվել ամուսնուց, եթե կարողանա հիմնավորել իր քայլը ամուսնու ֆիզիկական կամ մտավոր արատների տեսանկյունից:

Շարիաթում նշված են ապահարգանի չորս տեսակները՝ **բահն, ռաջա՛ա, մուբարաթ** եւ **խա՛ալ: Բահնի** պարագայում ամուսինը կարող է հետ բերել նախկին կնոջը, պայմանով, որ վերջինս ամուսնանա ուրիշի հետ եւ միայն նրանից բաժանվելու դեպքում նորից կարող է միանալ նախկին ամուսնուն՝ կնքելով նրա հետ ամուսնական նոր պայմանագիր: **Ռաջա՛ան** ապահարգան չի ենթադրում, քանի որ ամուսինը չի կորցնում կնոջ մոտ վերադառնալու կամ նրան վերադարձնելու իրավունքը: Այն ավելի շատ հիշեցնում է ընտանեկան վիճաբանություն: Կինը չի լքում

ամուսնու տունը: **Մուքարաթի** դեպքում ապահարզանի իրավունք ունի նաեւ կինը, սակայն պայմաններն առաջարկում է ամուսինը՝ նրա հետ հաշտվելու դիմաց պահանջելով **մահր** եւ սահմանելով դրա չափը: **Խա՛ալի** դեպքում կինը ամուսնուն առաջարկում է իր **մահրը** կամ այլ սեփականություն՝ ապահարզանի իրավունք ձեռք բերելու համար:

Շիա մահմեդականների մեջ տարածված է նաեւ ժամանակավոր ամուսնությունը՝ **սիդա**: Նման ամուսնությունները կարող են տեւել անգամ մեկ օր: Դրանք կարող են իրականացվել ասենք ճանապարհորդությունների ընթացքում: Այս դեպքում կինը ավելի ազատ է իր գործողություններում, սակայն իրավունք չունի ամուսնուց պահանջել միջոցներ կամ ժառանգություն:

Ինչպես նշեցինք, ամուսնու մահից հետո կինը կարող է նորից ամուսնանալ: Սակայն մինչ այդ այրին պետք է ավելի քան չորս ամիս սուգ պահի, վառ գույներով հագուստներ չկրի, չպճնվի, չզարդարի բնականաբար:

Իսլամի սոցիալական-իրավական հայեցակարգում մանրամասն մշակված են ժառանգության հետ կապված խնդիրները: Կինը, եթե ամուսինը ժառանգներ չի թողել, իրավունք ունի ժառանգել նրա սեփականության մեկ քառորդը, իսկ եթե զավակներ ունի, ուրեմն՝ մեկ ութերորդը: Մահացած կնոջ սեփականության կեսը ժառանգում է ամուսինը, եթե կինը զավակներ չունի: Հակառակ դեպքում ամուսինը ժառանգում է նրա ունեցվածքի մեկ քառորդը:

Իսլամը սահմանել է նաեւ ծնողների եւ զավակների հարաբերությունները: Վերջիններս որոշակի պարտականություններ ունեն ծնողների հանդեպ եւ պարտավոր են նրանց խնամքը տանել:

Մահմեդական մի շարք հեղինակներ, տեսաբաններ, ինչպես նաեւ իսլամի հարցերով զբաղվող մասնագետներ պնդում են, որ իսլամում կնոջ իրավունքները չի կարելի սահմանափակ համարել: Նրանց կարծիքով՝ իսլամը արմատապես փոխեց կնոջ տեղը ընտանիքում եւ հասարակության մեջ՝ բարձրացնելով նրա սոցիալական հեղինակությունը, քանի որ անրագրվեցին ընտանեկան կյանքի եւ կնոջ դերին առնչվող բոլոր նորմերը, հստակեցվեցին կնոջ պարտավորությունները, ինչը բացակայում էր արաբների մեջ նախաիսլամական շրջանում:

Միեւնույն ժամանակ, սխալված չենք լինի, եթե նշենք, որ Արեւելքում ընդհանրապես եւ իսլամական հասարակություններում մասնավորապես կանանց արարքները առավելապես ենթակա են հասարակական կարծիքին: Կանայք սահմանափակ դերակատարություն ունեն հասարակական եւ քաղաքական կյանքում:

Սակայն հարկ է նաեւ նշել, որ իսլամական ընտանիքի եւ հասարակության մեջ կնոջ դերի հետ կապված հարցերը պայմանավորված են տվյալ հասարակության պահանջներով: Փաստ է, որ կանանց իրավունքներն ավելի քան սահմանափակ են իսլամական պահպանողական երկրներում (մասնավորապես Սաուդյան Արաբիայում, Ծոցի երկրներում, Աֆղանստանում եւ այլն), որտեղ կինը շատ դեպքերում տնից դուրս գալու համար պետք է իրավունք ստանա ամուսնուց կամ ամուսնու հետ միասին դուրս գա տնից:

Այս ամենի հետ միասին պետք է փաստել, որ ներկայումս մահմեդական մի շարք երկրներում կանայք շատ ավելի ազատ են իրենց արարքներում, վճռորոշ ծայն ունեն իրենց ընտանիքներում՝ անկախ այն բանից, որ նրանք **հիջաբ** են կրում կամ փակ հագուստներ հագնում:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ Ձբիզնեւ Բժեզիսկի

ՀԱՄՆ-ը կանգնած է ընտրության առաջ: Աշխարհի միակ գերտերությունը, համաձայն Ձբիզնեւ Բժեզիսկու, կարող է ընտրել կա՛մ աշխարհակալության տանող ինքնամեկուսացման ծանապարհը, կա՛մ էլ դաշնակիցների օգնությամբ դառնալ համաշխարհային առաջնորդ: Գուցե տիրակալության եւ առաջնորդության միջեւ տարբերությունը չնչին է, սակայն նախագահ Քարթերի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդականն իր «Ընտրություն» գրքում հստակորեն սահմանազատում է այս երկու հասկացությունները: Յեղիակը պնդում է, որ սեպտեմբերի 11-ից հետո, երբ աշխարհը դարձավ անապահով, Ամերիկային առավելապես հարկավոր են այնպիսի դաշնակիցներ (հատկապես՝ երկարաժամկետ), որոնց հետ հարաբերությունները հիմնված լինեն ոչ միայն հարմարավետության, այլեւ համոզմունքների վրա: «Ով մեզ հետ չէ, նա մեր դեմ է» կարգախոսով առաջնորդվելու փոխարեն՝ Միացյալ Նահանգներին հարկավոր է իր դաշնակիցներին մասնակից դարձնել «ընդհանուր շահերի համաշխարհային ընկերակցության» ստեղծման գործին:

Ներկայումս Բժեզիսկին Ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի անդամ է եւ Ջոն Հոպկինսի համալսարանի պրոֆեսոր: Ստորեւ ներկայացնում ենք հատվածներ «Newsweek» շաբաթաթերթին տված նրա հարցազրույցից:

Չարց – Ձեր գրքում դուք քննադատում եք Բուշի վարչակազմին գերիշխանության հակվածության համար, բայց միաժամանակ հաստատում եք, որ «քառսից խուսափելու համար Ամերիկայի առաջնորդության ընդունումն անհրաժեշտ է»: Մի՞թե դա նույնը չէ, ինչ ասում է Բուշը:

Պատ. – Ամենեւին ո՛չ: Ես գտնում եմ, որ առաջնորդությունը, երբ ունեն գերակշռություն, բայց ամենագոր չես, պետք է լինի համաձայնեցված: Այլ խոսքերով՝ պիտի լինի ընդհանուր ախտորոշում այն ամենի, ինչ կատարվում է աշխարհում, եւ միասնական ռազմավարական գիծ: Ամենահզոր մասնակիցը կարող է ազդել ե՛ւ մեկի, ե՛ւ մյուսի վրա, սակայն չի կարող որեւէ բան պարտադրել ուրիշներին: Այն, ինչի համար ես մեղադրում եմ Բուշի վարչակազմին, ահաբեկչության՝ իբրեւ թե մեր ժամանակի գլխավոր որոշիչ երեւույթի վրա նրա սելեռումն է: Եվ որպես

հետեւանք, ես ամբաստանում եմ նրա վարչակազմին, որը փաստորեն մնացած աշխարհին ասաց՝ «ով մեզ հետ չէ, նա մեր դեմ է»: Դա մյուսներին պարզապես ենթարկման ստիպելու կամ մեր նկատմամբ թշնամություն հարուցելու միջոց է:

Հարց – Դուք գրում եք, որ Բուշի վարչակազմը սխալ է գործում՝ անջատելով ահաբեկչությունը քաղաքական համատեքստից, ինչը հանգեցնում է ԱՄՆ մեկուսացմանը: Բայց վերջին ահաբեկչությունը կատարվեց ոչ թե Միացյալ Նահանգներում, այլ Իսպանիայում:

Պատ. – Անհնարին է ժխտել, թե իսպանացիների դեմ ահաբեկչությունը տեղի ունեցավ այն պատճառով, որ նրանք սատարում են մեզ եւ, հետեւաբար, շարժառիթը եղել է Ամերիկայի հանդեպ ատելությունը: Ես համարում եմ, որ եթե ուզում ենք թուլացնել, իսկ հետո վերացնել ահաբեկչության սպառնալիքը, մեզ հարկավոր է զբաղվել Մերձավոր Արեւելքի հիմնախնդիրներով: Մենք չենք հասնի դրան, եթե «ահաբեկչության» մասին խոսենք որպես ինչ-որ վերացական, ընդհանրացված համաշխարհային չարիքի:

Հարց – Դուք գրում եք, թե «Իսրայելի միջոցով Պաղեստինի վրա ճնշման առավել ծայրահեղ ձեւեր կիրառելու» ԱՄՆ ձգտումը՝ օրինակն է այն բանի, որ Բուշի վարչակազմը «չի ցանկանում ընդունել հակաամերիկյան ահաբեկչության աճի եւ Մերձավոր Արեւելքի իրադարձություններում Ամերիկայի մասնակցության միջեւ պատմական կապը»: Ինչպե՞ս եք դուք բնութագրում ԱՄՆ արձագանքը Իսրայելի կողմից վերջերս իրականացված «Համաս»-ի հոգեւոր առաջնորդ, շեյխ Ահմեդ Յասինի սպանությանը:

Պատ. – Ես գտնում եմ, որ ԱՄՆ ներկա վարչակազմն անկարող է հասկանալ, որ Իսրայելի ծայրահեղ գործողությունները օգուտ չեն բերի ո՛չ Ամերիկայի, ո՛չ էլ երկարաժամկետ հեռանկարում Իսրայելի անվտանգությանը: Այդ անկարողությունն արդյունք է Մերձավոր Արեւելքի խաղաղ կարգավորման գործընթացում որոշակի առաջընթացի հասնելու նպատակի ռազմավարական զգացողության բացակայության:

Հրեաներն ու պաղեստինցիները գտնվում են «մահացու գրկախառնության» մեջ, եւ կողմերից ոչ մեկը կառուցողական կարգավորման հույսեր չի փայփայում: Իմ կարծիքով, միայն Միացյալ Նահանգները կարող է ապահովել խաղաղության պատշաճ պատկերացումը եւ այն հստակորեն համապատասխանեցնել «ճանապարհային քարտեզին»: Բայց դրա փոխարեն մենք «ճանապարհային քարտեզի» մասին խոսում

ենք չափազանց անորոշ ձեւով եւ խուսափում ենք տալ խաղաղության սահմանումը:

Չարք – Ամերիկյան զորքերն Իրաք մտցնելուց հետո անցել է մեկ տարի: Աշխարհն այդ ընթացքում ավելի^օ, թե^օ պակաս անվտանգ է դարձել:

Պատ. – Պատերազմն Իրաքում սկսվեց այն պատրվակով, թե այդ երկիրը տիրապետում է զանգվածային ոչնչացման զենքի: Լրացուցիչ փաստարկ հանդիսացավ այն, որ պատերազմը կօգնի արմատախիլ անել ահաբեկչությունը եւ կարգավորել պաղեստինա-իսրայելական հակամարտությունը: Իրականում այնտեղ ոչ մի զանգվածային ոչնչացման զենք էլ չկար: Իսկ ահաբեկչության դեմ տարվող պայքարը հավանաբար մղվեց հետին պլան, քանզի այսօր, Լոնդոնի ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի տվյալներով, աշխարհում թշնամական ահաբեկչական խմբավորումներն ավելի շատ են, քան մեկ տարի առաջ էր: Իսկ պաղեստինյան կարգավորումն անհաջողության է մատնվել:

Չարք – Այնուամենայնիվ Սադամ Չուսեյնից ազատվեցին: Մի^օ թե դա դրական իրադարձություն չէր:

Պատ. – Հնարավոր է, որ դա որեւէ մեկին անձնական բավականություն պարգեւեց, սակայն քաղաքական հետեւանքներն անհամեմատ բացասական ստացվեցին: Եթե խոսենք դրա համար վճարված գնի մասին, ապա կարելի է ավելացնել նաեւ 4 հազար սպանված ու խեղված ամերիկացիներին, 10 հազար իրաքցիներին, եվրոպական դաշնակիցների օտարացումը եւ աշխարհով մեկ Ամերիկայի հանդեպ ատելության հանընդհանուր սաստկացումը՝ հատկապես արաբական երկրներում:

Չարք – Միջազգային հանրության կողմից Բուշի նկատմամբ վստահության ցուցանիշի վրա ի^օնչ ազդեցություն ունեցան Ռիչարդ Քլարկի գիրքը եւ սեպտեմբերի 11-ի իրադարձությունները հետաքննող հանձնաժողովի առջեւ տրված ցուցմունքները:

Պատ. – Ես կարծում եմ, որ Բուշի նկատմամբ վստահությունը խարխիլվել էր մինչ այդ բացահայտումները: Դրանք սոսկ ընդգծում են այդ իմաստով արված հարցադրումները: Դա շատ ցավալի է. չէ^օ որ աշխարհում Ամերիկայի առաջնորդությունը կախված է մեր հանդեպ վստահությունից: Երբ սկսվեց կուբայական միջուկային ճգնաժամը, նախագահ Քենեդին պետքարտուղար Դին Էյքսոնին ուղարկեց Եվրոպա՝ Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլի հետ բանակցելու: Էյքսոնը հայտնեց, որ

խորհրդային հրթիռներն ուղղված են Միացյալ Նահանգների վրա, եւ անհրաժեշտության դեպքում ԱՄՆ-ը դրանք ոչնչացնելու համար ուժ կկիրառի, ինչը կնշանակի Արեւմուտքի ու Արեւելքի միջեւ միջուկային պատերազմի սկսում: Վերջացնելով զեկուցումը՝ պետքարտուղարն ասաց ղը Գոլին. «Իսկ այժմ թույլ տվեք ինձ ներկայացնել Ձեզ ապացույցներ»: Դը Գոլը պատասխանեց. «Ինձ պետք չեն Ձեր ապացույցները: Ես հավատում եմ Միացյալ Նահանգների նախագահին: Ասացեք նրան, որ մենք իրեն սատարում ենք»: Արտասահմանյան ո՞ր երկրի ղեկավարն այդ նույն բանն այսօր կասի: Ամենայն հավանականությամբ՝ ոչ ոք: Եվ դա լրջորեն պակասեցնում է մեր հզորությունը:

Չարք – Մնալո՞ւ է, արդյոք, Եվրոպան որպես ԱՄՆ դաշնակից:

Պատ. – Ես գտնում եմ, որ դա անհրաժեշտ է ու հնարավոր: Կարծում եմ, որ հարկավոր է Եվրոպային ներգրավել լուրջ ռազմավարական երկխոսության մեջ, որտեղ մենք կկարողանանք մանրակրկիտ քննարկել գործողությունները Մերձավոր Արեւելքում: Բացի այդ, տրամաբանական կլինի այնպիսի համաձայնագրի կնքումը, ըստ որի՝ մեզ Աֆղանստանում եւ Իրաքում (որտեղ եվրոպացիներն ակտիվ են) կհատկացվեն ավելի շատ եվրոպական օգնություն, զենք ու փող: Վերջին հաշվով, ԱՄՆ-ը կապահովեր խաղաղեցման գործընթացը Մերձավոր Արեւելքում՝ Իրաքում պատասխանատվությունը շուտափույթ կերպով ՄԱԿ-ին փոխանցելու եւ Իսրայելի ու Պաղեստինի համար խաղաղ կարգավորման ամերիկա-եվրոպական համատեղ բանաձեւ ձեւակերպելու փոխարեն:

Չարք – Բայց նման նախագիծն ընդունելի կլինի՞, արդյոք, ամերիկյան ժողովրդի համար:

Պատ. – Ես կարծում եմ, որ եթե ԱՄՆ ժողովրդին առավել մանրամասն եւ պակաս ամբոխավարական ձեւերով ասվի այն վտանգների մասին, որոնց հետ մենք բախվում ենք Սուեզից մինչեւ Սինցզյան ընկած՝ 550 մլն բնակչությամբ հսկայական տարածության վրա կատարվող իրադարձություններին բացառապես ամերիկյան մասնակցության պատճառով, ու եթե ավելացնենք, որ չմեծացնելով քաղաքական ակտիվությունը՝ կստանանք ավելի շատ ահաբեկչություններ, ապա ամերիկյան ժողովուրդը կպաշտպանի այդ նախագիծը:

Չարք – Ի՞նչ եք կարծում, այդ թեմաները կքննարկվե՞ն, արդյոք, այս տարվա նախագահական նախընտրական քարոզարշավի ընթացքում:

Պատ. – Իրականում իմ գրքի նպատակն է՝ հնարավորինս օժանդակել արտաքին քաղաքականությանը վերաբերվող ռազմավարական լուրջ բանավեճերի կայացմանը եւ գուցե, վերջին հաշվով, այդ քաղաքականության վարման գործում երկկուսակցական համակարգի վերականգնմանը: Այսօր Ամերիկայի արտաքին քաղաքականությունը ձեւավորում են աջ ծայրահեղականները: Ես չեմ ցանկանում, որ նրանց փոխարինեն ձախ ծայրահեղականները:

Հարց – Ահաբեկչության դեմ պայքարում Դուք խորհուրդ եք տալիս զբաղվել այն ծնող քաղաքական պատճառներով: Կա՞ն, արդյոք, ահաբեկչության քաղաքական արմատները ոչնչացնելու միջոցներ՝ չօրինականացնելով այն:

Պատ. – Անշուշտ: Կործանեք ահաբեկիչներին, բնաջնջեք նրանց եւ միաժամանակ լուծեք ահաբեկչությունը ծնող քաղաքական խնդիրները: Մեծ Բրիտանիան Օլսթերում այդպես է վարվում: Այդպես են վարվել բոլոր նրանք, ովքեր այդ ոլորտում հասել են հաջողության՝ լինի դա Իտալիան, թե Գերմանիան: Նույն կերպ մենք վարվեցինք «սեւ հովազների» հետ: Մի՞թե մենք առանց խտրության հարձակվում էինք ողջ սեւամորթ բնակչության վրա: Ընդհակառակը, ջանում էինք ապացուցել, որ մեր երկրում այլեւս խտրականություն եւ ռասայական նախապաշարումներ չկան, բայց միաժամանակ պայքարում էինք ահաբեկչության դեմ:

Հարց – Դուք գրում եք, թե Եվրոպան պիտի հասկանա, որ «իր անվտանգությունն առավել անբաժան է համաշխարհայինից, քան Ամերիկայի անվտանգությունը»: Ինչո՞ւ:

Պատ. – Որովհետեւ դեռ մեր ռազմական հզորությունն ավելի մեծ է, եւ մենք առաջվա պես փոքր-ինչ «ճանապարհից դուրս ենք»:

Սակայն գրքում ես շեշտում եմ, եւ դա շատ կարեւոր է, որ Ամերիկայի ազգային անվտանգության օրերն անդառնալիորեն անցել են: Ներկայիս իրողությունը դա ազգային անապահովությունն է, եւ այն հաղթահարելու միակ միջոցը մյուսների հետ համագործակցելն ու նրանց մոբիլիզացնելն է: Բայց մենք չենք կարող ցույց տալ ճանապարհը, եթե ինքներս ենք զնունդ սխալ ուղիով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ	
ԵՎ ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ	1
Դավիթ Յովհաննիսյան	
ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ	
ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ	4
Գագիկ Տեր-Յարությունյան	
ԱԴՐԲԵՋԱՆ. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ	
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ	8
Սեւակ Սարուխանյան	
ԻՐԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ	14
Գագիկ Տերտերյան	
ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՈՌԻՍԱՍՏԱՆ.	
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ	19
Սարգիս Յարությունյան	
ԻՐԱՎԻՃԱԿԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ	25
Արաքս Փաշայան	
ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՄԱՍԻՆ	31
Զբիգնեւ Բժեգինսկի	
ԱԶԳԱՅԻՆ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ	36

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: **Հեռ. 58 04 91, 58 04 83:**
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: